

## ՇՈՒՐԱԿՅԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ՆՈՒՐՈՒՄԾ՝ ԱՆԱՌԻԿ ԱՐՃԱԽԻՆ

21 հոկտեմբերին, ՀՀ ՊՆ իսունակ Շուշանի Ստեփանեան յայտնեց. «Արցախի ՊՐ հակաօդային պաշտպանութեան ստորաբաժանումները հարաւային ուղղութեամբ ժամը 8:30-ի սահմաններուն խոցած են թշնամիին ինքնաթիռը:



Իրավիճակը յարաբերական կայուն-լարուած է»:

20 հոկտեմբերին ան յայտարարեց. «Հակառակորդը հարաւային ուղղութեամբ՝ Խուդաֆերիկի ջրամբար, մեծ կորուստներ կրելով կը նահանջէ... Զգուշացուցած էինք՝ դժոխք կը մտնէք»:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ պատերազմին ընթացքին Արցախի պաշտպանութեան բանակը շուրջ 1 տասնեակ «Պայրաքտար» թրքական անօդաչու թռչող սարքեր խոցած է:

«Խոցուած սարքերէն ոչ մէկը, սակայն, պաշտպանութեան բանակի վերահսկողութեան տակ գտնուող տարածքներուն մէջ ինկած է: Կարծես վերջապէս «Պայրաքտար»-ի բեկորներ ունինք, որմէ ակնյայտ կը դառնայ, որ անիկա արտադրուած է Սեպտեմբերին, իսկ գերժամանակակից տեսախցիկը Զանատայի մէջ արտադրուած է Յունիսին», յայտնեց ան:



Ըստ վարչապետին, ասիկա կը փաստէ Թուրքիոյ անմիջական ներգրաւուածութիւնը Արցախի դէմ մղուող ահաբեկչական պատերազմին եւ անոր նախապատրաստութիւններուն մէջ:

«Եւ այն երկիրները, որոնք «Պայրաքտար»-ի անհրաժեշտ բաղադրամասեր կը մատակարարեն Թուրքիոյ՝ այս փաստին բերումով պէտք է հետեւին Զանատայի օրինակին եւ կատեցնեն հետագայ մատակարարումները», գրած է Փաշինեան:

## ՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԿՈՉ ԿՈՒՂԷ ՅԱՐԳԵԼՈՒ ԶԻՆԱՊԱՂԱՐԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՌԱՅՑ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՆԱԽԱՅԱՐԶԱԿ ԸԼԱԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

Զորքային, 21 հոկտեմբեր 2020-ին, «Ֆրանս Փրես» լրատու գործակալութիւնը յայտնեց, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի անդամները կոչ ուղղեցին Հայաստանի եւ Ատրպեյճանի՝ զինադադարի որոշումը յարգելու:

«Ֆրանս Փրես» յայտնեց, որ ՄԱԿ-ի անդամները Ֆրանսայի, Ռուսիոյ եւ ԱՄՆ-ի նախաձեռնութեամբ դուրսիկ Նիստ մը գումարեցին, եւ վերահաստատեցին զինադադարի գործադրման անհրաժեշտութիւնը: Դիւանագետներու համաձայն, Ռուսիան, որ ստանձնած է Անվտանգութեան Խորհուրդի նախագահութիւնը, հաղորդագրութիւն կը պատրաստէ՝ կոչ ուղղելու զինուորական գործողութիւնները անմիջապէս դադարեցնելու եւ Երեւանի ու Պաքուի միջեւ բանակցութիւնները վերսկսելու: Խորհուրդի անդամները այս շաբաթ իրենց հաւանութիւնը պիտի տան հաղորդագրութեան բովանդակութեան շուրջ:



Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով յայտնեց, որ Ռուսիա Հայաստանի եւ Ատրպեյճանի հետ գործակցաբար Արցախի մէջ զինադադարի ընթացքը պիտի հետապնդէ: Յիշենք, որ նախորդ 27 Սեպտեմբեր 2020-ին, Ատրպեյճան լայնածաւալ յարձակում մը սանձազերծեց Արցախի վրայ: Երկու կողմերուն միջեւ զինուորական գործողութիւնները սաստկացան եւ արձանագրուեցան մարդկային եւ նիւթական բազմաթիւ վնասներ:

ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը, սակայն, կրկին համարձակութիւն չունեցաւ Ատրպեյճանի նախադրածակ ըլլալն ու պատերազմական յանցագործութիւնները հաստատելու:

## ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹԵԱՄՔ ՍԵՄ-Ի Կ. ՎԱՐՇՈՒԹԵԱՆ, ԿԻՐԱԿԻ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020-Ի ԿԵՏՈՐԷ ԵՏՃ ԺԱՄՆ 6:00-ԻՆ, ԱԸԵ ԾԵՄԱՐԱՆԻ շրջափակէն ներս տեղի



ունեցաւ Արցախի նուիրուած համերգ մը հալէպահայերու հոծ բազմութեան ներկայութեան: Հանդիսականները իրենց զօրակցութիւնը յայտնեցին անառիկ Արցախի Ազատ ու Անկախ Հանրապետութեան:

Համերգը սկսաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին Արցախի նահատակներուն յիշատակը:

Գարոյին Զիւրքեան  
 Շաբ.՝ էջ 12

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Արցախը մեր ազգային կեանքին առանցքը կը կազմէ եւ անոր խաղաղութեան եւ անասանութեան ապահովումը առաջնահերթութիւն կը նկատուի» վերահաստատեց Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովը

Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 168-րդ նիստը գումարուեցաւ Շաբաթ, 17 հոկտեմբեր 2020-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Ազգային Առաջնորդարանի դահլիճէն ներս, նախագահութեամբ



Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի, ներկայութեամբ Թեմի ազգային երեսփոխաններուն, Կրօնական Ժողովին, Ազգ. Վարչութեան եւ շրջանի պատասխանատու ներկայացուցիչ տիար Յակոբ Զիլէճեանի:

Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ Մեթր Սունայուլ Սունայուլեան հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Հայրը աղօթքով եւ բացման խօսքով ժողովի բացման կարգը կատարելու:

Սրբազան հօր աղօթքով սկիզբ առաւ Ազգային Երեսփոխանական Ժողովի 168-րդ նիստը, որմէ ետք սրբազան հայրը «Հոգւոցն Հանգուցելոց»

Դիւան  
 Բերիոյ Հայոց Թեմի  
 Ազգային Երեսփոխանական Ժողովի  
 16/10/2020  
 Շաբ.՝ էջ 6



Խմբագրական

ՄԱԿ-Ը ԿՈՐԱՆՑՈՒՅԱ՞Ծ Է ԻՐ ԶԵՂԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը հիմնուած է պահպանելու միջազգային խաղաղութիւնն ու ապահովութիւնը, ազգերու միջեւ զարգացնելու բարեկամական յարաբերութիւններ, հասնելու միջազգային գործակցութեան:

Վերջին տարիներուն, սակայն, նկատելի է ՄԱԿ-ի դերակատարութեան նահանջը խաղաղութեան հաստատման տարբեր գործընթացներուն մէջ:

Աւելին. ՄԱԿ-ը կոչուած է կանխելու ցեղասպանութիւնները, սակայն այս օրերուն ոչ մէկ դերակատարութիւն կ'ունենայ զինեալ ահաբեկիչները որպէս մարդկային վահաններ օգտագործող եւ հայ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկելու մոլեգնութեամբ նախապարձակումներ կազմակերպող Ատրպէյճանն ու Թուրքիան դատապարտելու յստակ բանաձեւերով:

Արցախի վրայ օրերս տեղի ունեցող յարձակումներուն, պատերազմական յանցագործութիւններուն եւ սրբավայրերու քանդումին ընդառաջ, ՄԱԿ-ը, անկախ իր լիազօրութիւններու տարողութենէն, չդատապարտեց նախապարձակ Ատրպէյճանը, չարձագանգեց Ղազանչեցոց Ս. Ամենաբարկիչ եկեղեցւոյ դիտարդեալ հրթիռակոծումին, լուռ մնաց Մարտունիի մէջ թուրք-ատրպէյճանական հրահրումով ահաբեկիչներու կողմէ հայ զինուորի մը գլխատման պատերազմական յանցագործութեան իրողութեան դիմաց, իսկ տարածաշրջանը թուրք-ատրպէյճանական ծրագրաւորումով ահաբեկիչներու որջի վերածելու յստակ ծրագիրին մասին ոչ ՄԱԿ-ը, ոչ ալ անոր Ապահովական Խորհուրդը արձագանգելու յանդէսութիւն ունեցան:

Զանի մը օր առաջ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը անարդարօրէն հաւասար կոչ ուղղեց հակամարտող երկու կողմերուն՝ դադարեցնելու կրակը, քաջ իմանալով որ Ատրպէյճանն էր նախապարձակ կողմը, որովհետեւ աւելի քան տարի մըն է Ատրպէյճանի եւ Թուրքիոյ նախագահները կը ինչեցնէին Արցախը գրաւելու, Նոյնիսկ Երեւանի մէջ թէ խմելու իրենց մտադրութիւնը, որ կրպիտ խախտում էր դրացի երկիրներու ինքնիշխանութեան եւ ազգերու ինքնորոշման իրաւունքին:

Իսկ ե՞րբ եւ ինչպէ՞ս որդեգրուած է Ազգերու Ինքնորոշման Իրաւունքը: 16 Դեկտեմբեր 1966-ին, ՄԱԿ-ի ընդհ. Ժողովը որդեգրեց քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքի միջազգային ուխտագիրը, որուն հիմնական առանցքը Ազգերու ազատ ինքնորոշման իրաւունքին միջազգային օրէնքով ամրագրումն էր: Այս որոշումով ՄԱԿ-ը յանդուգն քայլ մը կ'առնէր սրբագրելու գաղութատիրական ուժերու կամակատարութեամբ գծուած եւ բռնութեամբ պահպանուած քարտէզները եւ Նոր մակարդակի կը բարձրացնէր խաղաղութեան եւ ազգերու իրաւունքներու անկորնչելի արժեքները:

ՄԱԿ-ի ընդհ. Ժողովը, իր լիարժէք դերակատարութիւնը ի գործ դնելով, մինչեւ 1966 թուական ստորագրուած անկախ պետութիւններու ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան համաձայնագիրներուն վրայ կ'աւելցնէր Ազգերու Ազատ Ինքնորոշման իրաւունքը՝ իբրեւ նախապայման մարդկային իրաւունքներու եւ քաղաքացիական ու քաղաքական ազատութեան:

1976-ին միջազգային ընտանիքին մաս կազմող պետութիւնները արդէն ստորագրած էին այս համաձայնագիրը եւ ճշդած քաղաքակիրթ մարդկութեան կեանքը առաջնորդող անոր սկզբունքները:

Յիշեալ համաձայնագիրին առաջին յօդուածը կ'ըսէր.

1-«ա.) Բոլոր ժողովուրդները ունին ինքնորոշման իրաւունք: Այդ իրաւունքին շնորհիւ, անոնք ազատ են սահմանելու իրենց քաղաքական կարգավիճակը եւ ապահովելու իրենց տնտեսական, ընկերային եւ մշակութային զարգացումը:

բ.) Բոլոր ժողովուրդները իրենց նպատակներուն հասնելու համար կարելիութիւն ունին ազատօրէն տնօրինելու իրենց բնական հարստութիւններն ու պաշարները, առանց խախտելու փոխշահաւետ սկզբունքի վրայ հիմնուած միջազգային տնտեսական գործակցութիւնն ու միջազգային իրաւունքէն բխած իրենց պարտաւորութիւնները: Ո՛չ մէկ ժողովուրդ, ո՛չ մէկ պատճառով պէտք է գրկել իր գոյութեան համար անհրաժեշտ եւ իրեն պատկանող միջոցներէն:

գ.) Սոյն դաշնագիրին մասնակից բոլոր պետութիւնները, որոնք կարգին անոնք, որոնք պատասխանատուութիւն կը կրեն ինքնակառավարում չունեցող եւ խնամատարութեան տակ գտնուող տարածքներու կառավարման համար, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կանոնադրութեան դրոյթներուն համաձայն կը խրախուսեն ինքնորոշման ձեռքբերումը եւ կը յարգեն այդ իրաւունքը»:

Յաւել կարգ մը պետութիւններ, անտեսելով այս գերադաս իրաւունքը, բռնարարքներով կը փորձեն ոչ միայն իրենց կամքը պարտադրել, այլեւ յանցագործութիւններ իրականացնել՝ ի տես ՄԱԿ-ին:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ու միջազգային ընտանիքին մօտ մեր ծայրը մինչեւ վերջ բարձրացնելու վճռականութիւնը տեղի տալու է: ՄԱԿ-ը երկակի չափանիշներով չի կրնար պահել իր հեղինակութիւնը, ոչ ալ խաղաղութեան կը նպաստէ:

Արցախի պայքարը, անոր զաւակներուն թափած արիւնը մեզ կը պարտադրէ ուժի իրաւունքին զուգորդել իրաւունքի ուժը:

«Գ.»

-Չորեքշաբթի, 21 Հոկտեմբեր 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ հրապարակեց 2020-ի 25 թուակիր հրամանագիրը, ըստ որուն 50,000 ս.ո. Նուէր գումար պիտի տրամադրուի քաղաքային եւ զինուորական ընդհանուր հատուածի պաշտօնեաներուն եւ 40.000 ս.ո. հանգըստեան կոչուած պաշտօնեաներուն: 50.000 կը տրամադրուի նախարարութիւններու, տնօրէնութիւններու, ընդհանուր հատուածի հաստատութիւններու, ընկերութիւններու, ինքնակառավարման ստորաբաժանումներու, առանձին եւ միացեալ դպրոցներու պաշտօնեաներուն: Նուէր գումարը գերծ պիտի մնայ տուրքերէն: Հրամանագիրը ի գործ կը դրուի հրապարակման թուականէն սկսեալ:



-«Ուաթան Օսլայն».- Երեքշաբթի, 20 Հոկտեմբեր 2020-ին, Սուրիոյ արդիւնաբերական պալատի նախագահ Ֆարես Շիհապի յայտնեց, որ սուրիական կառավարութեան արդիւնաբերական եւ առեւտրական հաստատութիւններուն տրամադրելի մագուրին գինը 300 ս.ո.-էն 650 ս.ո.-ի բարձրացնելը իր բացասական հետեւանքները պիտի ունենայ ներքին շուկային վրայ: Շիհապի շեշտեց, որ մագուրի գինին բարձրացումը իր կարգին արտադրութեան եւ փոխադրութեան ծախսերը պիտի բարձրացնէ, ինչպէս նաեւ շուկայէն ներս սղած պիտի յառաջացնէ, որուն հետեւանքով կարգ մը գործարաններ աշխատանքէ պիտի դադարին: Շիհապի դիտել տուաւ, որ այս մէկը նաեւ իր վատ ազդեցութիւնը պիտի ունենայ արտածման վրայ, մանաւանդ, որ արդիւնաբերական եւ ճարտարարուեստական գաւազան շրջաններ արդէն էլեկտրականութեան հոսքի անջատումէն կը տառապին:



-Երեքշաբթի, 20 Հոկտեմբեր 2020-ին, «Ուաթան Օսլայն» հաղորդեց որ Համայնի հիւսիսային Մօրթ քաղաքին մէջ թրքական ուժերը սկսան հեռանալ իրենց հսկողութեան կէտէն: Աղբիւրը յայտնեց, որ թրքական ուժերու սպաներուն, զինուորներուն եւ մեքենաներուն Մօրթէն հեռանալը զինուորական հսկայ պարտութիւն է թրքական կողմին համար: Անոնք շրջապատուած էին սուրիական բանակին կողմէ, իսկ տեղւոյն բնակիչները յաճախ անոնց կոչ կ'ուղղէին հեռանալու իրենց գիւղէն, որ լարուածութեան մեղմացման գօտի կը համարուի:



Թրքական Պաշտպանութեան Նախարարութեան որոշումով, թրքական ուժերը կը պատրաստուին իրենց պաշարուած կէտէն հեռանալ դէպի Իտլիպ նահանգի հարաւային գիւղական շրջանին մէջ գտնուող Ժապալ Զաուիա, ուր սկսած են ռազմավարական Զաուլաֆին գիւղին մէջ հսկողութեան Նոր կէտ մը հաստատել:

-Թրքական զաւթիչ ուժեր եւ իրենց ենթակայ ահաբեկիչներ 21 Հոկտեմբերին յարձակում գործեցին Ռաքքայի հիւսիսային շրջանի Այս Իսա աւանին վրայ:

Տեղական աղբիւրներ ՍԱՆԱ-ին յայտնեցին, որ թրքական ուժերը թնդանօթներով գնդակոծեցին աւանը, որուն հետեւանքով արձանագրուեցան նիւթական վնասներ: Աղբիւրը յիշեց, որ յիշեալ ուժերուն շարունակուող յարձակումներուն պատճառով շրջանի բնակչութեան կեանքը վտանգի տակ է:





Լուրեր Հայաշխարհին



ՀՅԴ ԱՐՃԱՆԻ ԿԿ-Ի ԱՆՊԱՄՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԾ ԵՆ ԱՐԱՅԻ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՀԵՏ

19 Հոկտեմբերին ՀՅԴ Արցախի Կեդրոնական Կոմիտեի անդամները հանդիպում ունեցած են Արցախի Հանրապետության Նախագահ Արայիկ Յարությանի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուած է Արցախի ներքին իրավիճակը, ռազմաճակատի ամրայ իրադրութիւնը:

Յատուկ անդրադարձ կատարուած է տիրող իրավիճակին մէջ կտրուկ բեկում մտցնելու հնարաւորութիւններուն:

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ԱՆՊԱՄՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՌՈՒՍԻՈՅ ԴԵՄՊԱՆԻՆ ՀԵՏ

ՀՅԴ Մամլոյ դիւանը կը հաղորդէ, որ երեկ՝ հինգշաբթի, 15 Հոկտեմբերին, Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպանատան մէջ, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը եւ ՀՅԴ Բիւրոյի Նախագահ Արմէն Ռուստամեանը հանդիպում ունեցած են Հայաստանի մէջ Ռուսիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Սերկէյ Քոփիլըքինի հետ:

Հանդիպումի ընթացքին կողմերը խօսած են Արցախի մէջ ընթացող պատերազմի մասին, միտքեր փոխանակած շրջանին մէջ քաղաքական զարգացումներուն վերաբերեալ՝ անդրադառնալով հայ-ռուսական յարաբերութիւններուն:

13 ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ «ՀՐԱՏԱՊ ԿԱՐԳՎ ՍՏԵՂՏԵԼ ՌԱԶՄԱԲԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՌՎԱՐՄԱՆ ԸՏԱՊ-ԴԵՏԱԿԱՆ ՅԱՏՈՒԿ ՄԱՐՄԻՆ»

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան 17 Հոկտեմբերին ուղիղ սփռումով ներկայացուց Հայաստանի մէջ գործող մէկ տասնեակէ աւելի քաղաքական ուժերուն կողմէ ընդունուած յայտարարութիւնը, զոր կը հրապարակենք ստորեւ:



Ատրպէյճանի եւ Թուրքիայի կողմից սանձազերծուած պատերազմի 20-րդ օրն է:

Համայն հայ ժողովուրդը, խորհրդարանական եւ արտախորհրդարանական քաղաքական ուժերը, մէկտեղել են իրենց կարողականութիւնը՝ դիմագրաւելու մեր երկու պետականութիւնների դէմ ուղղուած գոյապահպանական սպառնալիքը:

Ատրպէյճանաթուրքական յարձակումը՝ միջազգային ահաբեկչական տարբեր խմբաւորումների ներգրաւմամբ, վերածուել է միջազգային անվտանգութեանն ուղղուած իրական սպառնալիքի:

Հայութեան համար հայրենականի վերածուած պատերազմը նոր ծաւալներ է ստանում՝ յանգեցնելով մեծաթիւ անդամաւոր կորուստների: Պատերազմը սանձազերծած յարձակողապաշտները՝ Ատրպէյճանն ու Թուրքիան անհաղորդ են միջազգային հանրութեան՝ անյապաղ հրադարար հաստատելու եւ ռազմական ճանապարհով հիմնախնդրի լուծումը բացառելու պահանջներին: Աւելին, առաջին իսկ պահից Ատրպէյճանը խախտել է Ռուսաստանի Դաշնութեան միջնորդութեամբ ձեռք բերուած մարդասիրական հրադարարի հաստատման համաձայնութիւնը:

Օրհասական այս իրավիճակում՝ ռազմական, քաղաքական եւ դիւանագիտական ճակատներում բեկում մտցնելը հրամայական է: Ստեղծուած կացութիւնը համազգային ներուժի ամբողջական եւ

ՄԱՌՈՒԻ ՀԱՌՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020



ՀՀ քաղաքական ուժերու հետ խորհրդրակցութիւններու շրջագիծին մէջ, ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան Հոկտեմբեր 17-ին հանդիպած է ՀՀ առաջին Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուած է ՀՀ-ի եւ Արցախի դէմ սանձազերծուած թուրք-ատուրպէյճանական յարձակողապաշտութեան հետեւանքով յառաջացած իրավիճակը:

ՀՀԴ Հանրային կապերու գրասենեակ 17. 10. 2020 թ.

ԱՅ ԱԾ ՀՅԴ ԽՄԲԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԾ ԵՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐՉՈՅԵԱՆԻՆ ՀԵՏ

ԱՀ Ազգային Ժողովի «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» խմբակցութիւնը 18 Հոկտեմբերին հանդիպում ունեցած է ՀՀ Ազգային Ժողովի Նախագահ Արարատ Միրզոյեանին հետ:



Խմբակցութեան ղեկավար Արթուր Մոսիեան յայտնած է, որ ՀՀ Դաշնակցութեան Նախաձեռնութեամբ կայացած հանդիպումին ներկայացուած են պատերազմական դրութեան հետ կապուած մտահոգութիւններ, իրավիճակին մէջ կտրուկ բեկում մտցնելու համար քննարկուած են Արցախի պարտադրուած պատերազմին մէջ ԱՀ եւ ՀՀ ընելիքները:

Քննարկուած են նաեւ այս ուղղութեամբ ՀՀ ուժային կեդրոններուն հետ յարաբերութիւններուն հեռանկարները:

աննախադէպ գորաշարժ է պահանջում:

Դիմում ենք Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը եւ պահանջում:

Հրատապ կարգով ստեղծել ռազմաքաղաքական հարցերի գործակալ կառավարման շտապ-պետական յատուկ մարմին՝ օժտելով նրան որոշումներ ընդունելու, գործակալ գործողութիւններ ծրագրելու եւ համակարգելու իրաւասութիւններով:

Հայրենիքի պաշտպանութիւնն արդիւնաւետ կազմակերպելու համար ներգրաւել Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների Նախկին եւ գործող Նախագահներին, վարչապետներին, պաշտպանութեան եւ արտաքին գործերի նախարարներին, ռազմական եւ քաղաքական փորձառութիւն ունեցող այլ անձանց:

Ազատութիւն կուսակցութիւն, Ազգային Օրակարգ կուսակցութիւն, Ազգային Ժողովրդավարական Միութիւն կուսակցութիւն, Ազգային Ինքնորոշում Միաւորում կուսակցութիւն, Երկիր Ծիրանի կուսակցութիւն, Ժառանգութիւն կուսակցութիւն, Համերաշխութիւն կուսակցութիւն, Հայ յեղափոխական դաշնակցութիւն, Հայաստանի Դեմոկրատական կուսակցութիւն, Հայաստանի Հանրապետական կուսակցութիւն, Հայրենիք կուսակցութիւն, Յանուն Սոցիալական Արդարութեան կուսակցութիւն, Մէկ Հայաստան կուսակցութիւն

Յայտարարութիւնը բաց է ստորագրման համար:

17 Հոկտեմբեր 2020



## ԱՏՐՊԵՅՃԱՆ ԻՏԱԼԻԱՅԵՆ ԻՐ ԲԱՐԻՒԱՏՈՒԼԱՐՆԵՐՈՒՆ 30 ՏՈԿՈՍԸ ԿԸ ԱՏԱՆԱՅ

**Թադեոս Աւետիսեան**  
**ՀՀԴ Բիւրոյի տնտեսական հետազոտութիւններու գրասենեակի ծրագիրներու համակարգող, տնտեսագետ**

Այլեւս փաստ է, որ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի մարդակեր դեկավարները Ատրպէյճանի քարիւղահէն, թերզարգացած տնտեսութիւնը ամենակարճ ճամբով անդամալիօրէն ճգնաժամի փուլ մտնուցին:

Այս մարդակերներուն կողմէն պարբերաբար սանձազերծուող պատերազմները կործանարար հարուածներ կը հասցնեն Ատրպէյճանական տնտեսութեան ողնաշարին, որուն ջախջախումը այս օրերուն կը մօտեւայ կայծակնային արագութեամբ:

Այլայայտ է, որ Ատրպէյճանի տնտեսական համակարգի ողնաշարը քարիւղամուղներն ու կազամուղներն են, որոնց կայուն եւ անվտանգ շահագործումը նման իրավիճակի մէջ ուղղակիօրէն անկարելի դարձած է:

Ատրպէյճանին սպասող հետեւանքները պիտի չուշանան:



-Թուրքիոյ կողմէն Ատրպէյճանական տնտեսութեան վերջնական գաղութացում եւ իր աշխարհաքաղաքական ծաւալապաշտական շահերու սպասարկումին ծառայեցում,

-քարիւղարդիւնահանման ոլորտէն օտարերկրեայ ներդրումներու փախուստ,

ՀնԱ-ի մօտաւորապէս 50 տոկոսի, իսկ արտահանման մօտաւորապէս 90 տոկոսի կրճատման իրական նախադրեալներ,

-խորացող աշխարհաքաղաքական մարտահրաւերներ, տարածաշրջանային եւ միջազգային լիակատար մեկուսացում, միջազգային տնտեսական պատժամիջոցներ,

-քաղաքական անկայունութիւն, յեղաշրջումներ, երկարաժամկետ անկառավարելի իրավիճակ,

ընկերային լարուածութեան աննախադէպ խորացում եւ բախումներ,

-ի վերջոյ, արտաքին պատերազմի վերած ներքին՝ քաղաքացիական պատերազմի:

Այս իրողութիւնը ստիպուած են նկատի առնել Ատրպէյճանի արտաքին տնտեսական գործընկերները, որոնք անսահման օգտուած են Ատրպէյճանական քարիւղի եւ կազի գերարդիւնահանումէն եւ արտահանումէն: Օտարերկրեայ ներդրումները այս ոլորտին մէջ ունին անհամեմատօրէն անելի բարձր, չկառավարուող իրական վտանգներ, քան օրինակ խաղատներուն մէջ կատարուած մեծ խաղադրոյքներ:

Իսկ գերշահոյթներ ունենալու համար Ատրպէյճանին վճարուող քարիւղատուարները կը սնին Թուրքիոյ պարտադրանքով եւ Ատրպէյճանի ձեռամբ պարբերաբար սանձազերծուող պատերազմները մեր տարածաշրջանին մէջ: Օտարերկրեայ վճարողները կը դառնան անուղղակի մասնակիցը տարածաշրջանային ընդգրկում ունեցող այս մարդակեր գործընթացներուն:

Այս վերջին պնդումը յատկապէս կը վերաբերի այն երկիրներուն, որոնք իրականութեան մէջ ոչ տնտեսական գործօններով պայմանաւորուած գերօգուտներ ստանալու նպատակով ներգրաւուած են Ատրպէյճանական քարիւղի արդիւնահանման ոլորտին եւ այդ քարիւղը կը շարունակեն ձեռք բերել շուկայական անհամեմատօրէն անբարձր պարբերաբար ականատեսը ըլլալով այս մահաբեր գործարքներու անմարդկային իրական հետեւանքներուն:

Այս տեսակիւնէն առկայ իրողութիւնները փաստարկելու նպատակով կը շարունակենք Ատրպէյճանի արտաքին առեւտուրի ապրանքային եւ աշխարհագրական կառուցուածքներու ուսումնասիրութիւնը (աղբիւրը՝ <https://tradingeconomics.com/azerbaijan>):

Այսպէս՝ Իտալիան Ատրպէյճանական արտահանման ամենամեծ ներկրողն է: Ատրպէյճանի արտահանման աշխարհագրական կառուցուածքին մէջ Իտալիոյ բաժինը ամենամեծն է՝ մօտաւորապէս 30 տոկոս կամ տարեկան մօտաւոր 5,7 միլիարդ ամ. տոլար: Դեպի Իտալիա Ատրպէյճանական արտահանման ապրանքային կառուցուածքին մէջ քարիւղի եւ կազի տեսակարար կշիռը գրեթէ 100 տոկոս է:

Յատկանշական մէկ այլ փաստ. նախորդ չորս տարիներուն (2016թ. ապրիլէն քառօրեայ եւ 27 Սեպտեմբեր 2020-էն վերսկսած պատերազմներու միջանկեալ ժամանակահատուած) դեպի Իտալիա Ատրպէյճանական քարիւղի եւ կազի տարեկան միջին արտահանումը աճած է

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՍՓԻՒՌԸ ԿԱՐԵՒՈՐ ԴԵՐ ՈՒՆԻ ԱՐՑԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՄԷՋ»

ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերուն ուղղած իր շրջաբերական նամակին մէջ շեշտեց, թէ «Արցախի միջազգային ճանաչման ժամը հնչած է: Յատկապէս Սփիւռքը, իր



քարոզչական ու յարաբերական լայն կարելիութիւններով կոչուած է Արցախի ճանաչման դրօշը բարձր պահելու: Արդարեւ, քաղաքներու, նահանգներու ու կազմակերպութիւններու կողմէ ճանաչման գծով առնուած որեւէ քայլ իր կարելիութեամբ կրնայ ունենալ միջազգային համայնքին կողմէ Արցախի անկախութեան ճանաչման մէջ»: Ապա, ան թելադրեց առաջնորդ սրբազաններուն եւ ազգային իշխանութեանց ու յարակից մարմիններուն, հետեւողական աշխատանք տանիլ Արցախի միջազգային ճանաչման գծով:

Նորին Սրբութիւնը միաժամանակ յիշեցուց, թէ «գործնական բոլոր միջոցներով պէտք է շարունակենք մեր ամբողջական ու անվերապահ աջակցութիւնը հայոց բանակին: Հայոց բանակը մեր հպարտութիւնն է, մեր ազգին ու հայրենիքին գոյութեան երաշխիքն է, բոլոր ճակատներու վրայ մեր հերոս տղաքը կը պայքարին գիշեր ու ցերեկ եւ պատրաստ են իրենց արիւնը թափելու Արցախի անկախութեան ի խնդիր»:

Վեհափառ հայրապետը նաեւ հոգեւոր պետերուն, միջեկեղեցական կառոյցներուն եւ կազմակերպութիւններուն հետ իր յարաբերութեանց ընթացքին կը շարունակէ կարեւորութեամբ անդրադառնալ Արցախի ճանաչման հարցին:

մօտաւորապէս 2,5 անգամ՝ 2015թ. համեմատ:

Ուշագրաւ է, որ Ատրպէյճանի ներմուծման աշխարհագրական կառուցուածքին մէջ եւս Իտալիան ունի առաջատար դիրք՝ կը գտնուի առաջին տասնեակին մէջ: Աւելին՝ 2016-2019թթ. Իտալիայէն Ատրպէյճանի ներմուծումը աճած է տարեկան միջինը 10 տոկոսով:

Շարունակուող եւ թռիչքաձեւ աճող այս մահաբեր առեւտուրի տնտեսական գերօգուտները բաժին կը հասնին նաեւ Իտալիոյ:

Եւ այս հիմնական շարժառիթով պայմանաւորուած՝ Իտալիան օրերս դեմ արտայայտուեցաւ ԵՄ-ի կողմէն Թուրքիոյ նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու մասին Յունաստանի առաջարկին:

Այնուամենայնիւ, անհրաժեշտ է գիտակցիլ.

Յարմար առիթի պարագային թուրք-ատրպէյճանական տանդեմը (միասնութիւնը-«Գ.») պիտի օգտագործէ Ատրպէյճանի կուտակած քարիւղատուարները եւ առանց վարանելու պիտի խոցէ նաեւ Իտալիոյ խաղաղ բնակչութիւնը, հիւանդանոցները, եկեղեցիները ...



### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւնը կը պահանջէ իր բոլոր ազգապատկան կալուածներու վարձակալներէն, ըլլան անոնք Հալէպէն ներս թէ դուրս, ամենակարճ ժամանակամիջոցին կապ հաստատել մեզի հետ ստորեւ նշուած միջոցներով, յստակացնելու համար իրենց կալուածներու մէջ բնակողները կամ գանոնք գբաղեցնողները եւ կարգաւորելու յետեւալ իրենց կուտակուած պարտքերը փակելու գործողութիւնը, մինչեւ 30 Նոյեմբեր 2020 (պատկաճեւ ժաիրի պատճառով ժամկետը երկարաձգուած), այլապէս Կալուածոց Հոգաբարձութիւնը պիտի դիմէ օրինական միջոցներու:**

**Հեռաձայն - 0096321-2122756**

**WhatsApp - 0946901826**

**Ել. նամակ - periotemal@gmail.com**

*Կալուածոց Հոգաբարձութիւն*

ՊԱՏԿԵՐ

«...ԽԵՆԹԵՐՆ ԵՆ ԳՏՆՈՒՄ ՀՆԱՐ»



Ս. Մահտերճեան

Քաղաքիս մէջ Կիրակի, 18 Հոկտեմբերի գիշերը մօտ է կիսուելու: Նստած եմ պատկերասփիւռիս դիմաց, անձկութեամբ կը նաւարկեմ հայկական ալիքներու վրայ: Հայաստանի մէջ արդէն ողջունած են երկուշաբթին, կէսօրը կը մօտենայ: Հաղորդուած լուրերուն մէկ մասը Կիրակիի իրադարձութիւններն են: «Ատրպէյճան կը շարունակէ ռաբակոծումները, ոտնակոխած է 18 Հոկտեմբերի կէս գիշերին զինադուլ հաստատելու իր խոստումը եւս, ինչպէս ըրած էր 10 Հոկտեմբերի զինադուլին... Ռուսիայէն ետք, Ֆրանսան ալ կը նուաստացուի թուրք-ազերի զինակցութեան կողմէ, որովհետեւ Թուրքիա բացայայտօրէն թելադրած է Ատրպէյճանի, որ անտեսէ համաձայնութիւնը... Վարձկաններ... Կան նոր գոհեր, վիրաւորներ... Մեր քաջարի բանակը ետ շարտած է հիւսիսի եւ հարաւի գօտիներուն վրայ յարձակումները, ոչնչացուցած՝ սաւառնակներ, հրասայլեր, զինամթերք, մեծ թիւով զինուժ, ներառեալ վարձկաններ... Նպաստի եւ ընկերային ծառայութիւններու մասին ցուցմունքներ»: Մէկ խօսքով, նորագոյն կրկնութիւնները՝ նախընթաց 22 օրերու լուրերուն:

Կան դրական շարժումներ: «Հայութիւնը սկսած է երկրաշարժ շարժացնել աշխարհի տարածքին. Աւստրալիոյ, Ամերիկայի, Եւրոպայի արեւելեան եւ արեւմտեան ոստաններու մէջ ճամբաներ կը փակուին Ատրպէյճան-Թուրքիա մեղսակցութիւնը դատապարտող հայ գանգուածներու կողմէ...

Կը պահանջուի Արցախի անկախութեան ճանաչումը... Կան դրական արձագանգներ, ընդառաջողներ... Թուրքիան եւ Ատրպէյճանը դատապարտելէ անդին՝ պատժամիջոցներու ենթարկելու սպասման շեշտադրում... Քաղաքական դէմքեր, միջազգային կազմակերպութիւններ, որոշ պետութիւններու եւ քաղաքներու վարիչներ, միջազգային ժողովներ՝ սկսած են արդար արձագանգ հանդիսանալ հայութեան պահանջին ու տեսակետներուն... Թուրքիան զէնք գրկելու նախաքայլեր... Օտար նախարարի մը երեսփոխաններու Հայաստան ու Արցախ այցելութիւն, ճշմարտութեանց մասին վկայութիւններ, փաստարկում՝ որ թուրք-ազերիական տեղեկատուութիւնը սուտերով կ'ողողէ աշխարհը... Մինչեւ իսկ ազդեցիկ լրատու աղբիւրներ սկսած են իրենց ոճն ու միակողմանի՝ Ատրպէյճանին ի նպաստ կեցուածքը բարեշրջումի ենթարկել...»: Բոլոր տեղեկութիւններուն կ'ընկերանան համապատասխան տեսանկյուններ: Մէջ ընդ մէջ՝ մեկնաբանութիւններ, նաեւ՝ դրացիներու եւ հեռաւոր երկիրներու պետութեանց դրական, կրաւորական եւ ժխտական կեցուածքներուն մասին վերլուծումներ...

Լրատուութիւնը կ'ընդմիջուի ծանուցական հատուածով մը: Գլուխս ինքնաբերաբար կը գտնէ աթոռիս յենակը, մտածումներս կը շարունակեն լուրերէն մտորակահարուած թոնջքը: Ինչպէս ռեւէ հայ, իմ հոգիս ալ ալեկոծումի մէջ է. ցաւ՝ զոհերուն եւ հսկայական վնասներուն պատճառով, ինքնախրախոյս՝ դրական շարժումներուն ի լուր, առանց ինքնախաբերութեան՝ յոյս, որ ոճրագործ պետութիւններուն այս արկածախնդրութիւնը կրնայ սանձուիլ շուտով: Կոպերս կը փորձեն քունը վանել...

\*\*\*

Ծանուցումը վերջ գտաւ: Յանկարծ

պաստառնի մթնոլորտը փոխուեցաւ: Ահա հրապարակ մը. Արցախի՞ թէ Հայաստանի մէկ հրապարակն է: Ծուրջ-բոլորը ժողովուրդ հաւաքուած է, տողանցք մը տեղի կ'ունենայ: Տողանցողներէն ոմանք կ'անցնին ձիերու վրայ, ուրիշներ՝ հետիոտն՝ տարբեր ժամանակներու զգեստներ, զէնք ու գրահ կը կրեն. կը յաջողեն զինուորական բեռնակառքեր, որոնց վրայ տեղ գրաւած են մատղաշ զինուորներ: Տպաւորիչ շքերթ մըն է ամբողջութիւնը: Կու գան ու կ'անցնին անսպառ շարքերով... Այնպէս կը թուի, թէ ոմանք ծանօթ դէմքեր ունին: Ոմանք կը յիշեցնեն մեր նահապետները, հին ֆետայիները, յեղափոխական դէմքեր, գրողներ, բանաստեղծներ, կրօնաւորներ. հայկական «Նեմեսիս»ները իրականացնողները. Սարդարապատի եւ Արցախեան պատերազմի տարբեր փուլերուն ինկած հերոսները



յիշեցնողներ կան...: Եքերթին որոշ «հատուածները» կը յիշեցնեն հրապարակային այն տոնահանդեսները, որոնք կազմակերպուած էին տասնամեակներ առաջ, Երեւանի հիմնադրութեան 2700-ամեակին, կամ՝ նման պատմական հանգրուաններ պանծացնելու համար: Կ'երեւին Հայկ ու Արամ նահապետներն ու Ուրարտուի թագաւորները, Աւարայրն ու այլ գոյամարտերու կերտիչները յիշեցնող տողանցողներ:

Բոլորն ալ կ'անցնին բարձրաճակատ, լուռ բայց պերճախօս արտայայտութիւններով: Կամաց-կամաց ուշադրութիւնս կը գրաւէ աներեւոյթ խօսակարի մը՝ հանդիսավարի մը ձայնը, որ ոգեւորուած է բոցաշունչ ոճով պատգամներ կ'ունդղէ, վիճակներու եւ կացութիւններու վերլուծում կը կատարէ: Անկարելի է ամէն բան լսել, միտք պահել, սակայն կարելիս կ'ընեն ըսուածէն բաներ մը որսալու: Ահա թէ ինչ կ'ըսէ խօսակարը.

Մի' մոռնաք, որ Թուրքիան եւ անոր գործակից Ատրպէյճանն են մեր հիմնական թշնամիները. մեծ տարբերութիւն մի' տեսնէք այս ոճրագործ պետութիւններուն կամքին ենթակա՝ իրենց ժողովուրդներուն միջեւ: Տեսէ՛ք, թէ ինչպէ՛ս Աւետարանի Չաքարիան յիշեցնող՝ պապանձումի մատնուած են այն թուրք պատմագետներն ու մտաւորականները, որոնք առիթ չէին փախցնէր Յեղասպանութեան մասին խօսելու եւ մեզի խորատեղ բաշխելու: Թուրքիոյ ու Ատրպէյճանի զօրակցողները կը կազմեն երկրորդ օղակ մը, գոր պէտք է քանդել խելամիտ յարաբերութիւններով, ազդու աշխատանքով, ճշմարտութիւնները աղաղակող կերպով ցուցադրող տեղեկատուութեամբ:

Աւելի քան 100 տարի առաջ, Թուրքիոյ պետութիւնը օգտագործեց աշխարհը փոթորկող պատերազմը, փորձեց հայութիւնն ու Հայաստանը բնաջինջ ընել: Մենք յաջողեցանք

ձախողեցնել դաւին ամբողջական իրականացումը, այսօր, վիճակները երեւութապէս փոխուած են, Եւրօսիան կը մնայ նոյնը. Թուրքիա դարձեալ կը փորձէ ցեղասպանութիւն եւ հայաստանաջնջում իրականացնել, կը փորձէ օգտուիլ համաճարակին եւ ընտրաբաշխումներու իբրեւ թէ ուշադրութիւն շեղող կացութիւններէն: Դուք մեր գաւակներն ու թոռներն էք, մենք կ'ապրինք ձեր մէջ եւ միասնաբար պիտի ձախողեցնենք ցեղասպանական այս փորձը եւս:

Մեզմէ մէկը ատենին թուրք արձակեց մարդկային արդարութեան ճակատին: Այսօր, թուրք արձակելը բաւարար չէ: Ուրիշ մը պատգամեց, թէ հայը պէտք չէ մոռնայ այսքան չարիք, որպէսզի խուսափի նախատիքէ: Այսօր, թուրքին ու ազերիին չարքիը յիշելը բաւարար չէ, այլ պէտք է քայլ մը անդին անցնիլ եւ գործնապէս հաշիւ ու հատուցում պահանջել անոնցմէ, աշխարհին պարտադրել, որ գործի անցնի արդար հատուցման ի խնդիր:

Անցեալին, հզօր պետութիւններ անտարբեր ու կրաւորական կեցուածք ցուցաբերեցին մեզի հանդէպ, ըսին, թէ իրենց նաւերը չեն կրնար Արարատ հասնիլ: Այսօր ալ անոնք տարուած են նման հաշիւներով: Ձեր պարտականութիւնն է ցոյց տալ, որ Արցախն ու Հայաստանը պաշտպանելը, թրջական ոճրային ծրագիրներուն ենթակաները պաշտպանելը շատ ավելի գերակշիռ կարեւորութիւն ունին, քան որոշ ժամանակի վրայ երկարող հաշիւները: Պէտք է ցոյց տաք, որ թրջական արիւնաներկ տարածքներուն ընդարձակումը կը նշանակէ ոճիրներու գօտիին տարածումը: Պէտք է ցոյց տաք, որ Հինաստանէն մինչեւ Միջին Արեւելք, արաբական աշխարհի եւ եւրոպական ոստաններ, «ծայրայեղականներու» տարածած ոճիրներուն ետին կան նաեւ Երտողաններու թաքուն ու բացայայտ ձեռքերը, ուղեցոյցը:

Իսլամական, մասնաւորաբար արաբական աշխարհին պէտք է ցոյց տաք, որ թրջական «իսլամութիւնը» կապ չունի իրենց հաւատալիքներուն հետ, թուրքին համար կրօնքը պարզապէս քող մըն է՝ ծածկելու իր ցեղապաշտ եւ թուրանական ծրագիրները, որոնց թիրախներն են դրացիներէն մինչեւ Ծոց ու հիւսիսային Աֆրիկէ, նոյնինքն Իրանն ու ավելի հեռուները՝ մինչեւ Կեդրոնական Ասիա ու Հինաստան: Արաբական աշխարհը ինքն իրեն պէտք է խնայէ կարմիր սուլթաններու բռնատիրական լուծին կրկնութիւնը, աչքերը լայն բանայ Իսլամը վարկաբեկումի ենթարկող եւ միայն եաթաղանի չաստուածը պաշտող թուրքին դիմագիծին վրայ: Կրօնամոլ ահաբեկիչներու զինուորագրումը եւ անհակակշիռ արձակումը՝ Սուրիայէն մինչեւ Իրաք, Լիպիայէն մինչեւ Եւրոպական քաղաքներ, «Դամոկլեան Սուր» մը կախած է քաղաքակիրթ մարդկութեան գլխուն: Միջին Արեւելքի մէջ կրօնքներու համակեցութեան արդար քարոզչութիւնը կը սպասէ համապատասխան կիրարկում:

\*\*\*

Մարտական երաժշտութեան կարճ հատուածէ մը ետք, խօսակար շարունակեց.

-Դուք այսօր Արցախի սահմաններուն վրայ չէք պաշտպաներ միայն հայկական այս փոքր տարածքն ու Հայաստանի ամբողջութիւնը, այլ պատուար էք ընդդէմ թրջական նոր կայսրութեան:

Թուրք-ազերիական ուժերը երկրորդ անգամ դրժեցին զ ինադուլի համաձայնութիւնը: Կը նկատեք, որ անոնց յարձակումներուն գլխաւոր թիրախներէն մէկն է հարաւային ճակատը: Անոնք կ'աշխատին խորտակել այդ ճակատը եւ արշաւել դէպի արեւմուտք: Անոնց աչքերը ուղղուած են Հայաստանի հարաւային գօտիին, որուն վրայով, կ'երագնեն հողային կամուրջ մը նետել դէպի գրաւեալ Նախիջեւան եւ ամբողջացնել Ատրպէյճան-Ղափան ու



## ՀԱՊՐԱԳՐՈՒԹԻՒՆ...

Սկիզբ՝ էջ 1

աղօթքը մատուցեց՝ Ազգային Վարչութեան ատենապետ հանգուցեալ տիար Յարութ Զիլիսեանի հոգւոյն:

Առաջնորդ Սրբազան Յայրը բացման խօսք արտասանեց, յայտնելով, որ հակառակ պատկառելի ժառանգի համավարակի վտանգին եւ տնտեսական դժուարին պայմաններուն, Բերիոյ Յայոց Թեմի բոլոր կազմերը լծուեցան աշխատանքի եւ վերակազմակերպուած կերպով յառաջ տարին իրենց վստահուած գործունէութիւնը:

Սրբազան հայրը կարեւորութեամբ յայտնեց, որ պատմական այս թեմը դիմագրաւելով բոլոր դժուարութիւնները հաստատուն կը մնայ իր առաքելութեան մէջ եւ արիաբար կը շարունակէ իր գոյերը, հաւատարիմ մնալով Սուրբական Յայրենիքին:

Մասին Եպիսկոպոս Երախտագիտութեամբ անդրադարձաւ անցնող ամիսներուն Սուրբոյ Խորհրդարանին կողմէ Յայոց Տեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման, որ քաջալեր ներդրում ունեցաւ Յայ Դատի հետապնդման գործընթացին մէջ: Սրբազան հայրը ողջունեց նաեւ Սուրբոյ Խորհրդարանէն ներս հայ երեսփոխաններուն Արցախի զօրակցութեան ի նպաստ արտասանած խօսքերը:



Անդրադառնալով Արցախի մէջ տեղի ունեցող թշնամիի դաւադիր յարձակումներուն, սրբազան հայրը մարտեց, որ շուտով խաղաղութիւնը հաստատուի Արցախի մէջ:

Այնուհետեւ ընթերցուեցան Ազգային Վարչութեան եւ Կրօնական Ժողովի միամեայ տեղեկագիրները, որոնք հանգամանօրէն ներկայացուցին միամեայ ժողովական, թեմական, յարաբերական, միջ-համայնքային, միջ-եկեղեցական, հոգեւոր, ուսումնակրթական, կալուածային-շինարարական, տնտեսական, զօրակցական բնագաւառներու լայնածաւալ գործունէութիւնը:

Ընթերցուեցան նաեւ Ազգային Երեսփոխանական 167-րդ նիստով հաստատուած Ուսումնակրթական Յարցերու, Կալուածային եւ Տնտեսական Սերտողութեան յանձնախումբերու տեղեկագիրները:

Տեղեկագիրներու ընթերցումէն ետք ժողովականները լուսաբանական հարցումներ ուղղեցին, համապատասխան գեղոյցներ ստացան եւ Թեմի գործունէութիւնը հարստացնող շինիչ առաջարկներ ներկայացուցին:

Ազգային Երեսփոխանական Ժողովի 168-րդ նիստը վերահաստատեց, որ Արցախը մեր ազգային կեանքին առանցքը կը կազմէ եւ անոր խաղաղութեան եւ անսասանութեան ապահովումը առաջնահերթութիւն կը նկատուի: Ժողովը իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Արցախի հայոց պետականութեան եւ հայոց բանակին, կարելի բոլոր միջոցներով սատար հանդիսանալով Արցախի գոյապայքարին եւ Յայաստան-Արցախ-Սփիւռք միասնական վճռականութեամբ դէմ դնելով ցեղասպան թուրքի խաւարային ծրագիրներուն:

Ազգային Վարչութեան բազմազան ու տարաբնոյթ աշխատանքները առաւել արդիւնաւորելու հեռանկարով, Ազգային Երեսփոխանական Ժողովը որոշեց եօթը անդամներու փոխարէն ինը անդամներ ներառել Ազգային Վարչութեան մէջ: Դիտարարելով որ յայտնուած Ազգային Վարչութեան միացան տիար Ճորճ Շահինեան, Տիկ. Մարալ Գալայճեան-Սեմերճեան եւ տիար Յարութ Յայրապետեան:

Ժողովի օրակարգերու ավարտին, Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ Մերթ Սունալով Սունալուեան հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Յայրը՝ փակման խօսքով եւ «Պահպանիչ» աղօթքով փակելու նիստը:

Սրբազան Յայրը բարձր գնահատեց ժողովի աշխատանքները եւ անկէ բխած արդիւնքները, ապա գնահատեց թեմի ազգային մարմիններուն անցնող տարուան գործունէութիւնը մաղթելով, որ վերանորոգ թափով սկսին յառաջիկայ շրջանը՝ վերածաղկեցնելով Բերիոյ Յայոց Թեմը:

Սրբազան Յայրը որդիական շնորհակալութիւն յայտնեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին, Սուրբահայրութեան նկատմամբ իր ցուցաբերած զօրակցութեան համար, ապա շնորհաւորեց Նորին Սրբութիւնը՝ իր կաթողիկոսական ընտրութեան եւ օծման 25-րդ ամեակին առիթով, մաղթելով բարեյաջող ծառայութիւն եւ արեւշատ տարիներ, իբրեւ ազգընտիր Յովնակապետ իմաստութեամբ հովուելու իր հոգածութեան յանձնուած հայ եկեղեցւոյ գաւազները:

Սրբազան հայրը անդրադարձաւ նաեւ Սուրբայէն դուրս ապրող մեր հայրենակիցներուն, որոնք անցնող օրերուն նեցուկ կանգնեցան սուրբահայրութեան եւ նիւթապէս թէ բարոյապէս իրենց զօրակցութիւնը յայտնեցին մեր ժողովուրդին նկատմամբ:

Խօսքի ավարտին, սրբազան հայրը Աստուծոյ նախախնամութիւնը հայցեց՝ Սուրբական Յայրենիքի բարօրութեան եւ Արցախի մեր սահմաններուն անդորրութեան համար:

Ազգային Երեսփոխանական Ժողովը փակուեցաւ Առաջնորդ Սրբազան Յօր «Պահպանիչ» աղօթքով:

## «...ԽԵՆԹԵՐՆ ԵՆ...»

Սկիզբ՝ էջ 5

Չանգեզուր-Նախիջեան-Թուրքիա կամուրջը, որ ինքնին մահացու հարուած մը պիտի ըլլայ Յայաստանին, ո՛չ արհամարհելի սպառնալիք՝ Իրանին:

Պէտք է տարուիք «փոխանակումի» կամ «փոխ-գիշումի» տարազներով, որոնք հրապարակ կը նետուին իբրեւ լուծումի ուղի: Մի՛ մոռնաք, որ նոյն ծրագիրները տարբեր բառամթերքով Յայաստանին հրամցուած էին Արցախեան պատերազմի առաջին փուլին: Մի՛ մոռնաք, որ մեր ժողովուրդի ծննդոցէն ասդին, արիւնով ու անհաշիւ զոհաբերութիւններով պահպանած ենք մեր հողերը, վերաշահած՝ մեզմէ խլուածին այս կամ այն բաժինը: Այսօր, Ատրպեյճան խաղաղութեան համար պայման կը դնէ «անմիջականօրէն իրեն վերադարձնել արցախեան հինգ շրջաններ», իսկ մնացեալ երկուքին համար ալ կը պահանջէ ժամանակացոյցի մը ճշդումը: Արդեօք մոռցա՞ծ ենք, որ Ատրպեյճանը մեզմէ առնելիք հող չունի, ընդհակառակն, բաց կը մնան Շահումեան, Գետաշէն եւ Նախիջեան խորագրեալ պարտամուրհակները: Թուրքիա ունի արեւի մեծ պարտամուրհակ մը՝ Արեւմտեան Յայաստանը, իսկ քանի մը ամիսէն պիտի նշենք Կարսի ու Մոսկուայի համաձայնագիրներուն 100-րդ տարեդարձը:

Մեր դիւանագիտութեան, քաղաքական միտքին ու տեղեկատու մեքենաներուն ճիտին պարտքն է ցոյց տալ աշխարհին, որոշումի տեր երկիրներուն ու հաշտարարներուն, թէ ԱՐՅԱԽԸ ԵՐԲԵԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ՉԷ ՊԱՏԿԱՆԱԾ Խորհրդային տարիներուն իսկ, եւ ստալինեան շիլ կամայականութեան ճամբով, իբրեւ ԻՆԶՆԱՎԱՐ ՄԱՐՉ դրուած է Ատրպեյճանի խնամքին տակ: Այսօր, արեւի քան երեք շաբաթներու վրայ երկարող յարձակումները, առանց մոռնալու անցեալ երեսուն-առաւել-եօթանասուն տարիներու «ոճրային խմանատարութիւնը», բաւարար փաստ են, թէ ի՞նչ ճակատագիր կը սպասէ Արցախին ու անոր հայութեան, եթէ որեւէ տարագի տակ Ատրպեյճանի ձեռքը հասնի անոր:

Ձեր աչքերը տարածեցէք դէպի հեռու շրջաններ, նաեւ դէպի ապագայ: Աշխարհի մէջ տեղի կ'ունենան մեծ ելեւէջներ, երկրամասեր կը մասնատուին, տեղի կ'ունենան կցումներ... Նման փոթորիկներէ կարելի է նպաստաբեր հովեր ապահովել՝ մեզմէ խլուած հողեր մաս առ մաս վերադարձնելու մեր հայրենիքին ու ժողովուրդին, չմնալ «պատանդ»ը՝ Թուրքիան եւ զօրակիցները անշրջանցելի են խորագրեալ այժմու տրամաբանութեան:

Թուրք-ազերիական յարձակումները ոտնակոխած են ո՛չ միայն գինադուլի համաձայնութիւններ, այլ նաեւ միջազգային ընկալեալ օրէնքներուն, բոլոր օրէնքներուն տարրն ու ոգին: Մեր ժողովուրդը ահաւոր ցաւ ու վնաս կը կրէ պետական ոճիրներու, պետական ահաբեկչութեան հետեւանքով: Յայութիւնը, իր Յայաստանով ու Արցախով՝ իրաւունք ունի ո՛չ միայն Միջազգային Դատարան դիմելու՝ պահանջելու ոճրագործ զոյգին դատապարտումն ու արդար հատուցում, այլ նաեւ իրաւունք ունի ցաւցնող հարուածներ տալու անոնց: Ցաւցնող բնականաբար անոնց գործած ջարդերուն կրկնօրինակը է, որքան ալ որ հայուն ցաւած սիրտը նման մտածողութեան հիմքեր ստեղծէ...

Մենք անցեալին թուրք սուլթաններն ու ցեղասպանները պատժելու ցաւցնող միջոցներու դիմեցինք մեր սեփական ձեռքերով, երբ տեսանք, որ ոճրագործները ամբաստանող եւ մահուան իսկ դատապարտող իրաւապաշտպանները չ'անցան խօսքի սահմաններէն անդին: Տեղասպանը պատժելու քայլեր առնուեցան նաեւ մօտաւորապէս 50 տարի առաջ, ճամբայ բանալով մեր իրաւունքներուն ճանաչման առջեւ: Թուրքիան եւ անոր թիկունք կանգնողները պէտք է զգան, որ հայը կրնայ այսօր ալ ցաւցնող միջոցներու դիմել: Այս ճամբուն վրայ, կարելոր քաղաքներու մէջ եւ երկիրներու միջեւ ճամբաներու փակումը այս իմաստով կրնայ նախաճաշակ մը տալ: Այսօր ալ Պանք Օթոմաններ կան հոս-հոն, մասնաւորաբար քարիւղի աշխարհին մէջ...: Մեր ձայնին ու բռնուցքին միասնութիւնը հրամայական է, ինչպէս եղած է Արարատի շուքին տակ մղուած բոլոր Սարդարապատներուն: Այս գիծը պէտք է զարգացնել արեւի՛ կազմակերպ, համակարգուած ու ազդու ձեւերով, իրականութիւնները օտար լեզուներով արեւի՛ հետեւողական ու կեղծողացեալ միջոցներով տարածել՝ ծանօթացնելով զանգուածներուն, որովհետեւ, հաւատացե՛ք, առնչակից պետութիւնները շատ լաւ գիտեն իրականութիւնները, սակայն իրենց ժողովուրդներէն բարձրացող բողոքի ձայներ կրնան նպաստաւոր յորձանքի վերածել կաթիլ-կաթիլ կուտակուող ջուրը:

\*\*\*

Տողանցքը կը շարունակուի անհատում շարքերով, խօսակն ալ, հինէն-նորէն, նշանաւոր մարդոց խօսքերէն մեքերումներ կը կատարէր: Օրինակ, խօսելով Արցախի ճակատներուն վրայ մեր քաջերուն նահատակութեան մասին, մեծ բանաստեղծի մը խօսքերը փոքր բարեփոխումով մը արտասանեց հետեւեալ բառերով.

...Թրքաց մայրեր թող լան, ու դուն  
Ուրախ լուրեր տար Յայաստան:  
Անմիջապէս հետեւեցաւ երգ մը.  
Երբ չի մնում ելք ու ճար,  
Խենթերն են գտնում հնար...  
Այս տողերը կրկնուեցան, հետզհետէ արեւի՛ ուժգին հնչեցին եւ...  
արթնցուցին զիս:  
Նստած էի պատկերասփիւռիս դիմաց: Լուրերու նոր շարանին կ'ընկերակար երգը...

ՍԱՐՄԱՆԱԴՊԱՐՈ

(ՄԱՍ Բ.)



Արհստ Կորյեան

Արեւը իր շողերը սկսած էր արծակել Արցախի հորիզոնին:

Նոր առաւօտ մը կը բացուէր աշխարհին վրայ, եւ այդ առաւօտը տեղեր խաղաղութեամբ կը բացուէր եւ ուրիշ տեղեր՝ վտանգով լի ու անապահովութեամբ: Արցախին բաժին ինկած էր վերջին տեսակի առաւօտը, բայց տակաւին օրեր առաջ արդէն այդպէս չէր: Ժողովուրդը իր բնականոն կեանքը կ'ապրէր՝ երեխան իր դպրոցը կ'երթար, երիտասարդը՝ իր համալսարանը ու երէցները՝ իրենց գործին:

Արցախցիին համար սակայն նորութիւն մը չէ այս պատերազմը: Ան քաջ գիտակցած է, որ կը գտնուի թշնամիին քթին տակ, ու կ'երկարի մինչեւ անոր աչքը՝ որպէս փուշ: Գիտէ, որ տեւական յարձակման սպառնալիքի տակ է, որ գայլն իր ախորժակը սրելու ու դարաւոր երազը կատարելու պատրաստակամութիւնը միշտ ունեցած է:

Վերջին օրերուն Արցախի փողոցները գիշերան իրենց եռանդը Արցախի նկուղներուն: Ու կեանքը սկսաւ շարունակուիլ այնտեղ:



Իւրաքանչիւրը ունէր այնտեղ իր ընկերը:

Ուսուցիչը կը հաւաքէր պատանիները ու կը շարունակէր անոնց դասաւանդել, ոչ այնքան գիտութեան սիրոյն, որքան անոնց միտքը զբաղեցնելու եւ ան ու սարսափը մեղմացնելու ու անոնցմէ հեռացնելու միտումով:

Քահանան իր շուրջ կը հաւաքէր հաւատացեալները եւ աղօթք կը բարձրացնէր առ Աստուած, եւ սարկաւագի բռնած բուրվառն բարձրացող ծուխը նկուղին մէջ՝ պահը աւելի խորհրդանշական կը դարձնէր:

Տատիկներն ու պապիկները ձեռքերը միացուցած, աչքերը փակ կ'աղօթէին ո՛չ իրենց համար, այլ իրենցմէ ոչ շատ հեռու գտնուող երիտասարդ հոգիներուն համար:

Երիտասարդ հոգիներ:

Որովհետեւ ոմանք տարիքով երիտասարդ չէին, այլ հոգիներն էին երիտասարդ...

Այրերը տեղափոխութիւնները եւ կարգադրութիւնները կ'ընէին, պէտք եղածին չափ նկուղը ապահով դարձնելու համար, իսկ կիները կը փորձէին շինել իրենց ընտանիքի տաքուկ անկիւնը, ուր երեխաները պիտի դիմէին օրուան աւարտին:

Հայ ու ոչ-հայ լրագրողներ կ'այցելէին անոնց, բարձրախօսները անոնց բերնին մօտեցնելով կը փորձէին բառեր ու զգացումներ կորզել, բայց յաճախ կը ձախողէին: Իրենց փնտռածը պէտք էր գտնէին այս ժողովուրդի հոգիին ու պատմութեան մէջ, բայց ոչ լեզուին վրայ:

Արցախի փողոցները անկենդան չէին, բայց կեանքը թաքստոցներուն մէջ աւելի եռուն էր:

\*\*\*

Երիտասարդը քանի ժամ քնանալէ ետք, արթնցաւ ո՛չ ինքնաբերաբար, ո՛չ ժամացոյցով, ո՛չ իր մայրն էր արթնցողը, ոչ ալ իրենց դրացիին բարձր ձայնը: Բլաշինքոֆներու լարոցի ձայնին տակ էր որ արթնցաւ այսօր: Հերթափոխութեան ժամն էր: Ձախ անկողինին վրայ նստած էր իր ընկերը՝ Կարօն, որ նոյնիսկ ձախ կողմի հսկող տղան էր խրամատին մէջ:

Երիտասարդը իր առաւօտեան ծխախոտը անյազօրէն ներս կը քաշէր:

Կարոյին հետ այս ընկերութիւնը սկսած էր Արցախ տանող հանրակառքին մէջ: Երկու երիտասարդ տղայ, քով քովի նստած անձանօթներ, կը նոյնանային իրենց ընտրած ճամբով, բայց կը տարբերէին իրենց ետեւ ձգած մարդոցմով ու բաներով:

Կարօն, 19 տարեկան երիտասարդ, դեղնորակ ու նիհար, բայց կազմուած ու քաջ մարմինով՝ հիւանդապահուհիի մը երազն էին իր բազուկները, թելի մակերեսային երակները երեւելի էին ու դիւրութեամբ կրնար մէկը անկէ արեան քննութեան համար օրինակ մը առնել: Եւ այդ օրինակին վրայ քննութիւններ կատարելով, կրնար այնտեղ գտնել, այլ հիւանդութիւններ հերքել, բայց այն ինչ կը վազէր այնտեղ, այդ արեան մէջ որպէս իր հոգիին բաժին՝ չէր կրնար գտնել մարդու շինած արդիական բժշկական սարքերը օգտագործելով:

Կարօն պայմաններով ու նիւթական վիճակով՝ կը գերադասէր երիտասարդին: Ունէր իր անձնական տունն ու ինքնաշարժը, գորս հայրը գնած էր իրեն համար ի պատրաստութիւն ապագայ օրերուն:

Սակայն Կարօն ինչ կորսնցուցեր էր այս երկրէն, աւելի սուղ էր քան ինչ ունէր այս երկրին վրայ:

Հայրը 8 Մայիսի 1991-ին, բարձունքը բարձրացող տղոցմէ էր, որոնք ոչ միայն յաղթեցին մահուան, այլ նաեւ կեանքին:

Անոնք յաղթական վերադարձան տուն ու շարունակեցին գայն կառուցել: Արամը՝ առջինները, 8 տարեկան էր, երբ ամուլը ունեցաւ իր երկրորդ մանչը՝ Կարօն:

Հայրը յաջողած էր տարիներու ընթացքին բարելաւել ընտանիքի

նիւթական վիճակը հետզհետէ իր գործի մաշտապները ընդլայնելով: Երկու հազար թուականի երկրորդ տասնամեակի կիսուն, հայրը արդէն դարձած էր գինեգործութեամբ զբաղող քաղաքի յայտնի դեմքերէն մէկը:

2016-ի Ապրիլին էր, նոր պատերազմ մը սկիզբ առաւ:

Այս անգամ հայրը միակը չէր, Արամն ալ անոր հետ գնաց, ու հակառակ Կարոյին երթալու փորձերուն, հայրը կտրականօրէն մերժեց անոր երթալը: Տունն ալ մէկը պէտք էր մնար մօր քով...

Եւ քառօրեայ պատերազմի առաջին երկու օրերը միայն բաւարար էին, որ Կարօն իր հայրն ու եղբայրը կորսնցնէ:

Կարօն կ'երթար կռուելու այն հողին վրայ, ուր շաղախուած էին ուր ու եղբոր արիւնը...

\*\*\*

Հիմա ինչ գիտեր ինչու հոս էր, Արցախ տանող ճամբուն վրայ պատմած էր այս բոլորը երիտասարդին:

Երիտասարդը նայեցաւ Կարոյին եւ ինչ որ ձեռով մը իր «վրէժ»ը լուծեց ըսելով «Ախպերը՛ս, մտաւոր՛գ ես, ինչ որ բա՛ն ես մտածում», ճիշդ նոյն այն բառերով ինչպէս օր մը առաջ Կարօն ըսած էր իրեն խրամատին մէջ:

«Լա՛ւ, վերջ» հեռուէն ըսաւ Միքայէլ, որ հեռուն կեցած, իրենց երեքին առաւօտեան սուրճը կը պատրաստէր:

Կարօն երկուքին մէկ նայելով, սկսաւ բարձրաձայն մտածել:

- Միակ մտահոգութիւնս մօրս վիճակն ա: Ես կորցնելիք բան չունեմ, բայց եթէ մի դժբախտութիւն պատահի, տուժելու ա միայն մայրս: Երկար կեանք մը ապրի նոյնիսկ, հորս թողած ժառանգը հերիք ա նրան, սակայն այն ինչ կորցրեց կամ կարող ա կորցնել ոչ ոք ու ոչ մի բան կարող ա վերադարձնել նրան:

- Լա՛ւ, ինչէր կը ձաբռնես, - միջամտեց երիտասարդը, - մահէն վախցողը այստեղ չէր ըլլար, ի հարկէ, բայց մենք տակաւին կեանք ունինք շարունակելիք, մեր քաղաքացիական պարտքը պիտի կատարենք ու վերադառնանք մեր տուները առողջ ու ապահով: Հայաստանը, Սփիւռքն ու հայութիւնը մեզի կը դիտեն ու միաբերան կը գոռան «Յաղթելու եւք», մենք պարտական ենք այդ մէկը իրականացնելու թելուգ մեր դիտրով, բայց մեր տուն վերադարձով ա՛լ աւելի:

Միքայէլ սրճեփն ու երեք սկահակները բերելով տեղաւորուեցաւ Կարոյին քով, մինչ երիտասարդը քովի անկողինին վրայ կը շարունակէր պառկած մնալ:

Այդ պահուն ներս մտաւ Զերոփը, Ստեփանակերտի Աւետիք Իսահակեանի անուան դպրոցի աշակերտը, որ առանց ծնողքին լուր տալու փախած ու հասած էր հոս:

- Հա՛, Զերոփ, այսօր ի՞նչ բերած ես մեզի, - հարցուց երիտասարդը:

- Փետ, որ գիշերը տաքանաք:

- Արի, արի:

Ու երիտասարդը իր քով դրուած սեղանիկի մէկ դարակը բացաւ ու մէջի տոպրակը առաւ, անոր մէջինը հանեց եւ վրայի թուղթը հանելէն ետք տուաւ Զերոփին:

- Ես ի՞նչ ա, - հարցուց պատանին:

- Snickers:

- Պա ձեռքի՞նդ:

- Նամակ:

- Ումի՞ց:

- Չեմ գիտեր:

Սրճեփը պարպուած էր ու երեք սկահակները լեցուած էին, եւ երբ երեք երիտասարդները կը պատրաստուէին իւրաքանչիւրը իր բաժինը առնել, ահագնազը ինչեց ու մոխրագոյն, երկաթեայ դրան վրայ դրուած կարմիր լոյսը սկսաւ վառիլ:

Գնդապետը ներս մտաւ:

- Տղերք, զգա՛ստ: Յարձակում է կատարուում:

Զերոփը իր եկած ճամբայէն վազելով վերադարձաւ եւ տղաքը անմիջապէս ելան իրենց տեղէն եւ առին իրենց դիրքերը:

Մինչ անոնց սուրճերը բերնէ-բերան լեցուն՝ կը մնային անկողինին վրայ:

(Շարունակելի)

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ
Խմբագիր՝ Զարմիկ Զիլվերշեյն-Պողիկեան
Սրբագրիչ՝ Չեփիւռ Պապիկեան-Աւագեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Կորյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեյն
Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեւեան
- Ծանուցողներն են աշխատակիցներն ու խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:



ՈՒՍՈՒՑՉՈՒՅԻՍ

Չարմինե Զիլվաբեկյան-Պողոկյան

Օր. Էմմա Ազարիկեանը նկարագրելու համար բաւարար է ըսել, որ ան ուսուցչուհի էր բառին լիարժէք իմաստով:

Ուսուցչուհի էր ոչ թէ միայն դասարանէն ներս, այլեւ առօրեայ, միութենական իր կեանքին, ընկերային յարաբերութիւններուն մէջ անգամ:

Նախակրթարանի օրերուս, Ազգ. Զայկազեան վարժարանի հայերէնաւանդ ուսուցչուհի ջանք ու եռանդ չէր խնայեր հայերէնը սորվեցնելու եւ սիրցնելու իր աշակերտներուն: Դասաւանդելը եւ սորվիլը ժամերու մէջ սահմանափակելը, պարտականութեան վերածելը ամօթալի երեւոյթներ էին օր. Էմմային համար:

Դասարան կը մտնէր ժպիտը դեմքին, կապտաւուն աչքերէն լոյս եւ ջերմութիւն կ'արտացոլային: Ներս մտնելուն պէս ձեռքէս բռնած ամպիոն կը բարձրացնէր զիս ու կը թելադրէր. «Չարմինե՛, երգել բային խոնարհումը, իր բոլոր ձեւերով, գոց ըսէ՛, միկէն որ պարտականութիւններու ստուգումը կատարես»: Ու ամէն օր աշակերտի մը պարտքն էր բայի մը խոնարհման, գոյականի մը հոլովման ձեւերը արտասանել: Ամէն օր այդ կարճ ժամանակուան մէջ կրկնել տալով, մեր ուսուցչուհին մատողաջ մտքերուն մէջ դրօշմած կ'ըլլար արեւմտահայերէնին յատուկ հոլովումի եւ խոնարհումի բոլոր ձեւերը:

Նախքան աշակերտներուն դասարան մտնելը օր. Էմման, իր գեղեցիկ ու ընթեռնելի ձեռագիրով, օրուան դասը ամբողջութեամբ գրած կ'ըլլար գրատախտակին մէկ ծայրէն միւսը: Առաւօտեան ժամը 7:30-ին արդէն գրատախտակը լեփլեցուն կ'ըլլար: Ափ ի բերան կը մնայինք... Ե՞րբ գրած էր այդքան բան, ո՞ր ժամուն դպրոց եկած էր, չէինք իմանար: Աշակերտը երբ դասարան մտնէր, դասը պատրաստ պիտի ըլլար իր դիմաց:

Օր. Էմման լաւ գիտէր, որ շաբթուան պահերը անբաւարար էին հայերէն լեզուի եւ գրականութեան դասերը անարտին հասցնելու համար: Բայց մեր ուսուցչուհին լուծումը գտած էր: Կը թելադրէր ամէն օր դասապահերէն կէս ժամ առաջ՝ ժամը 7:30-ին, ներկայանալ դպրոց, որպէսզի այդ կէս ժամուան մէջ, անկախ դասապահերէն, դասի անաւարտ որեւէ ծրագիր անարտին հասցնէր ու մեր գիտելիքները հարստացնէր: Այդ պահերը կոչեցինք «7:30», ու ամէն օր նախքան մեր արձակուրդը կը հարցնէինք իրեն. «Օրիորդ, վաղը «7:30» ունի՞նք» եւ անյոյս կը սպասէինք ժխտական պատասխանի մը, քիչ մը հանգստանալու եւ դասերէն խոյս տալու համար, սակայն միշտ ալ դրական պատասխան կը ստանայինք. «Անշուշտ ունինք, չուշանաք, տղա՛ք»:

Զէինք ուշանար, սկսած էինք սիրել այդ պահերը: Օր. Էմման յաջողած էր մեր դժգոհ դեմքերը ժպիտով գարդարել ու համոզել, որ հայերէնի դասապահը ժամերու մէջ կարելի չէ սահմանափակել, որովհետեւ հայերէն սորվիլը հաճելի աշխատանքի պէտք է վերածել, ոչ թէ սովորական դասի մը, գնահատանի չի մը շրջագիծերով սահմանափակել գայն:



Տարի մը ամբողջ «7:30»երուն ներկայ ըլլալով հայերէնի իմացութեան մէջ մեր սերնդակիցներէն քայլ մը առաջ անցած էինք արդէն:

Այսպէս էր օր. Էմման նաեւ միութենական կեանքին մէջ՝ հետեւողական ու բժախնայի: Տարիներ շարունակ ծառայելով Զամագային Զայ Կրթական եւ Մշակութային Միութեան, որպէս «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի վարչական, ապա նաեւ Ծրջ. Վարչութեան անդամ, ամէն օր ներկայ էր Զամագայինի կեդրոն: Յաճախ ատենադպրութեան պաշտօնը ստանձնելով այնքան կոկիկ ու դասաւորուած կը գրէր, արխիւներ կը պահէր, ծրագիրներու մշակման կը նպաստէր, որ ուսուցչուհիի մը առաքելութեամբ կը գործէր ու կը սորվեցնէր երիտասարդ միութենականներուն: Ձեռնարկներու յատուկ մեծ տետրակ մը ունէր, որ այնքան տպաւորած էր զիս: Այդ տետրակին մէջ իւրաքանչիւր ձեռնարկի մանրամասնութիւնները կ'արձանագրէր, լուսանկարները, յայտագիրներն ու տոմսերը կը փակցնէր յատուկ էջի մը վրայ, ապա կ'աւելցնէր այդ ձեռնարկին մասին «Գանձասար»ի մէջ լոյս տեսած յօդուածները ու այսպէս ամբողջական, վաւերական արխիւ մը կը պատրաստէր իւրաքանչիւր գործունեութեան մասին:

Աններող էր լեզուական, ուղղագրական սխալներ թոյլ տուողներուն նկատմամբ: Իր դիտողութիւնը կ'ուղղէր սխալողին՝ առանց խնայելու զինք: Ով ալ ըլլար ան, ինչ պաշտօն ալ ունենար, նոյն սուր քննադատութեան կ'արժանանար:

Օր. Էմման մեծ ներդրում ունեցաւ նաեւ «Գանձասար» շաբաթաթերթին: Իր իւրայատուկ թղթակցութիւնները, յօդուածները, մշտական ներկայութիւնը թերթի սիւնակներուն մէջ երիտասարդ գրողներուն ուղեցոյց կը դառնային: Այնքան գեղեցկօրէն կը նկարագրէր ձեռնարկ մը, պարախումբի մը ելոյթը կամ թատերական ներկայացում մը, որ ընթերցողը անպայման կը մղէր ներկայ ըլլալու ձեռնարկին:

Ուսուցչուհիս կողքիս էր միշտ, դպրոցէն ներս՝ իր խստութեամբ, միութեան մէջ՝ իր ծրաշնութեամբ, իսկ խմբագրատան մէջ՝ իր մնայուն

ԼՈՒՌ ԱՐՁԱԳԱՆԳԸ

Նայիրի Ասուրեան Ֆրանքեան

Գրիչս առած, յօդուածիս նախաբան մը կը փնտռեմ: Ի վերջոյ կ'եզրակացնեմ, որ ամենաճիշդ ձեւը օր. Էմմային այցելութիւններուն դրոյապատճառներուն մասին գրելն է:



Նախքան մեր սիրելի, ազնուական կրթական մշակին՝ օրիորդ Էմմա Ազարիկեանին մահանալը, մօտաւորապէս վեց ամսուան ընթացքին անոր բարեկամուհին դարձած էի: Իր առողջութեան վատթարանալուն պատճառով այցելութիւններս կրկնապատկած էի, որպէսզի կարենայի շօշափելի սէր եւ գուրգուրանք ցուցաբերել իրեն: Պարտական կը զգայի Զայաստան գտնուող կնքահօրս՝ Էմմային անդրանիկ եղբօրը, որ անկեղծութեամբ եւ հետեւողականօրէն կը հետաքրքրուէր քրոջմով: Իմ կարգիս, ազնիւ կնքամօրս միտքը հանգստացնելու համար օր. Էմմային որպիսութիւնը կը փոխանցէի՝ պատկերները եւ ձայնագրութիւնները դրկելով:

Օրիորդ Էմման եւ մնացեալ հայերէնի նուիրեալ ուսուցիչ-ուսուցչուհիները այլ նիւթեր դասաւանդողներէն կը գատորոշուին, որովհետեւ ուխտաւորի նման իրենց առաքելութիւնը պահողներ են, նիւթական վարձատրութիւնը արհամարհողներ, ազնիւ, հայոց լեզուով ու գրականութեամբ լիացած հոգի ունեցողներ, կորսուելու, ձուլուելու սպառնալիքները դիմագրաւողներ, յանձնուելու եւ ընկրկելու իրաւունք չունեցող մշակներ են, մեր ինքնութիւնը կերտող դեսպաններ են:

Օրիորդ Էմմային սեղանին վրայ գետեղուած էր փայտեայ տուփիկ մը, որուն մէջ կային եռագոյն թերթիկներով արձանագրուած Աստուածաշնչեան խոստումներ: Ան օրական երեք գոյներէն ալ կը կարդար. Սեղանին վրայ կար նաեւ ուսումնասիրական գրքոյկ մը, որուն վերնագիրն էր՝ «Մեղքերու Բառարան», որ միասնաբար կ'ընթերցէինք, իրականութեան մէջ՝ ես կ'ընթերցէի եւ ինք ուշադիր զիս կ'ունկնդրէր առանց ընդհատելու: Օր մը, երբ կրկին կը կարդայինք եւ հասած էինք իններորդ էջի տասնմեկերորդ մեղքին բացատրութեան, յանկարծ լռիկ Էմման բերանը բացաւ եւ ըսաւ, որ ինք վշտացած եւ դառնացած էր անձէ մը, բայց բնաւ անուր չի իշխեց... Անարժանաբար իրեն խորհուրդ տուի, որ նախաքայլ առնելով այդ անձին տեղեկացնէ իր դառնութիւնը, որպէսզի ներելով բուժուի իր սիրտը, որովհետեւ քաջ գիտէի, որ խօսքով վիրաւորողը, վիրաւորուելով ու չներելով դառնութիւնը պահողը, նոյնքան հաշուետու է Աստուծոյ:

Ան նիհար ու վտիտ կազմուածք ունէր, բայց զօրաւոր նկարագիր: Լուռ գործող էր, բայց՝ արձագանգող: Անկեղծօրէն կ'արտայայտուէր, շողքորթութիւն չէր սիրէր: Զիւրասեր ու բարեգործ էր, բայց ըրածներուն մասին փող հնչեցնող չէր:

Յիշատակդ անմար պիտի մնայ մեր մտքերուն եւ սրտերուն մէջ, սիրելի՛ օր. Էմմա:

աշխատակցութեամբ, միկէն իր կեանքի վերջին ամիսները:

Երբ թղթակցութիւն մը, յօդուած մը յանձնէր, անպայման կը փափաքէր ձեւաւորումէն ետք կրկին աչքէ անցընել, որպէսզի վրիպակ մը չըլլար իր յօդուածին մէջ: Էմմա Ազարիկեանին համար անթոյլատրելի էր անխնամ լեզուով, թոյլ ոճով գրութիւն յանձնել թերթին:


Այսպէս էր օր. Էմման, երկնագոյն, գեղեցիկ աչքերուն, նրբակազմ մարմնին մէջ խիստ ու վճռական ուսուցչուհիի մը հոգին կը հսկէր մշակութային, լրատուական, հրատարակչական եւ կրթական մեր կեանքին: Զոգի մը, որմէ միայն սէր եւ գուրգուրանք կ'արտացոլար:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**  
 Ազարիկեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Բերիոյ Զայոց Թեմի Ուսումնական Խորհուրդին, Զամագայինի մեծ ընտանիքին եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, հեռաձայնով կամ համացանցի միջոցով մասնակից դարձան իրենց հարազատին՝

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԷՄՄԱ ԱԶԱՐԻԿԵԱՆԻ**

մահուան սուգին:  
 Դանգուցեալի քառասունցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 25 Հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագին, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Կիլլաներ-Յայէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:





## ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ (5)

Արմենակ Եղիայեան

### Գառնիկ Գուգալեան

Այն օրը պատմութեան նիւթը Միջին դարերու վայրենի ցեղերու՝ հոններու, վիզիգոթներու եւ վանդալներու արշաւանքն էր: Չես գիտեր ի՞նչ զուգահիշակութեամբ՝ այս անգամ հարցաքննուողը երկրորդ «Եպիսկոպոս» մըն էր՝ Վարդգէս Փանոսեան անունով, ապագայ ֆրանսագիր բանաստեղծ, վաղամեռիկ Vasco Varoujan-ը, որ իր կարգին Ս. Ղազարը ձգեր եւ միւսին հետ ճեմարան էր եկեր:

-Դու եպիսկոպոս, արի՛ Եստեղ:

Փանոսեան կարծես անհամբեր կը սպասէր առիթը՝ պարպելու համար իր ակադեմական գիտելիքներու տոպրակը, որ միշտ լեցուն կ'ըլլար:

Ուստի գլուխը առած սկսաւ սանձարձակ արշաւել պատմութեան բաւիղներուն մէջ.

-«Այս ցեղերը Կեդրոնական Եւրոպայէն ճամբայ էլան, հասան մինչեւ Դոն, և արեւելքին ու արեւմուտքին գայն, ապա իջան հարաւ, անկէ անցան Ափրիկէ, ուր նմանապէս արեւելքին ու արեւմուտքին Կարթագէնը ու յետոյ անհետ կորսուեցան պատմութեան քեմէն»...



Համայնապատկեր արդի Փարպիի

-Կեցի՛ր, եպիսկոպոս,- սաստեց Գիւգալեան,- կրանք չեն անհետացել:

-Երանք անհետացել են, պարո՛ն,- ինքնավստահ պնդեց նախկին դպիրը՝ նմանակելով Գիւգալեանի շեշտն ու բարբառը:

-Ա՛յ չեպիսկոպոս, քեզ ասում եմ՝ կրանք չեն անհետացել:

-Պարո՛ն, այսպէ՛ս գրուած է ձեր գիրքին մէջ:

-Եստեղ սխալ գրուած է...

-Հապա ո՞ր եմ,- քմծիծաղով մը հարցուց «Եպիսկոպոսը»՝ փորձելով վերլուծել այս ամբողջութիւնը եւ վերականգնել կորսնցուցած եպիսկոպոսական վարկը:

Գիւգալեան հանդիսաւորապէս ոտքի կանգնեցաւ, աջ թելը տարածեց օդին մէջ եւ լայն կիսաշրջանակ մը գծելով մեր գլխուն վերեւ՝ փորձելով ընդգրկել բոլորս անխտիր՝

-Ահա կրանք Եստեղ են,- յայտարարեց հանդիսաւորապէս:

Դասարանը կուշտուկուռ քրքջաց, բայց այս անգամ ոչ մէկ միջամտութիւն կատարեց Գիւգալեան եւ եզրապատկան քուրմի մը պէս լուռ ու մունջ բազմեցաւ՝ յայտնապէս գոհացած իր կատարած բաղդատութենէն ու...գիտէն:

\*\*\*

Հակառակ այն իրողութեան, որ Աբգարեանի մէջ բաւական լաւ պատրաստութիւն ստացած էի հայոց եւ ընդհանուր պատմութեան մէջ, անհամեմատօրէն արեւելի, քան իրենց նախակրթութիւնը ճեմարանի մէջ կատարած դասընկերներու,- չեմ գիտեր ինչու, իմ յարաբերութիւնս որեւէ ատեն չեմ չեղաւ Գիւգալեանի հետ, գնահատանքի ոչ մէկ նշոյլ ցոյց տուաւ, նայուածքին ու ձայնին մէջ միշտ պահեց կծու երանգ մը, եւ կացութիւնը շրջելու բոլոր ճիգերս ապարդիւն մնացին, չըսելու համար՝ վատթարացուցին գայն:

Այն տարի պատմութիւն նշանակուած էր յետմիջօրեի առաջին պահուն:

Ես յաճախ ստիպուած կ'ըլլայի Պուրճ-Համմուտի տունս գալ կէսօրին ճաշելու: Երթելէնը տեղի կ'ունենար հանրակառքով, որով քալելու ալ բաւական տեղ ունէի: Այս բոլորը կէսօրուան մէկուկէս ժամուան դադարին ընել կարենալու համար կը խաղայի ահաւոր վագրուք մը, որ շնչահեղձ կը դարձնէր գիւս:

Եւ ահա պատահեցաւ, որ օր մը քանի մը վայրկեան միայն ուշանամ, երբ արդէն գանգը տուած էր, ընկերներս դասարան մտած էին եւ դուռն ալ փակած: Չարկի դուռը, ու երբ բացուեցաւ, դեմս գտայ Գիւգալեանի շանթահարիչ նայուածքը:

-Մէկ էլ չփորձուէ՛ս...չե՛ս մտնի...դո՛ւրս...

Ու չմտայ:

Քիչ ետք դասընկերուհիս՝ Շուշիկը, արտորանքով դուրս ելաւ ու շփոթահար վերադարձաւ գաւաթ մը շուրով:

-Ի՞նչ կայ,- հարցուցի՝ իմ կարգիս անհանգստացած:

-Վիճակը լաւ չէ,- եղաւ պատասխանը,- գոյնը նետած է եւ շունչը դժուար կ'առնէ կոր, կարծեմ պիտի մեռնի ...

Ու մտաւ ներս՝ առիթ չտալով դատելու իրականութեան ու կատակի բաժինը:

Բարեբախտաբար...չմեռաւ: Երեք տարի եւս պիտի ապրէր այնուհետեւ:

Բայց ժամանակ մը անց կրկնուեցաւ իմ ուշացումս:

Այս անգամ Գիւգալեան ոչ միայն արհամարհանքով մը արգիլեց դասարան մուտքս, այլեւ արտասանեց վիրաւորական այնպիսի ընդվզեցուցիչ բառեր, որ այստեղ չեմ կրնար արձանագրել, որովհետեւ կրնայ վիրաւորուիլ ինքը՝ հայոց լեզուն:

Իսկոյն որոշեցի վերջ տալ ուսումիս ճեմարանի մէջ եւ հաստատ քայլերով դիմեցի դէպի Ելքի դարպասը...սակայն դուրս չէլայ, որովհետեւ ոչ մէկ հեռանկար ու այլընտրանք ունէի առջեւ, ուստի վերադարձայ, շուար,

նուստ ու անճար նստայ կաղնիներուն տակ եւ սպասեցի՝ ձգելով, որ անցնի այս փոթորիկն ալ...

Եւ շարունակեցի ճեմարանական մնալ:

\*\*\*

Յաջորդ՝ 1955-56 տարեշրջանին, որ կը համապատասխանէր իմ Brevet-ի տարիիս, Գիւգալեան դադարեցաւ ուսուցել: Յոգնած էր, առողջական հարցեր ալ ունեցաւ, ինչպէս կը լսէիք:

Ձմրան արեւոտ ու տաքուն օր մըն էր:

Կէսօրուան դադարին կ'ուղղուէի դէպի թիւ 1 շէնքը, ուրկէ ինք յուշիկ քայլերով կը յառաջանար հակառակ ուղղութեամբ: Կը կրէր լայն վերարկու մը, որ սակայն արեւի փոքրացուցած էր զինք: Ձեռնոց դրած էր մէկ ձեռքին, միւսը ազատ էր: Կանգ առի, բարեւեցի, ազատ ձեռքը առի ու համբուրեցի, վիճակը հարցուցի:

-Ա՛յ տղայ,- պատասխանեց լայն շունչ մը առնելով, առանց տարրական ջերմութեան ու չոփ-չոր շեշտով մը,- ինձ սպանելուց յետոյ վիճակս ես հարցնում:

Սպանելուց յետոյ...ընդամենը երկու անգամ ուշացեր էի դասերուն...

\*\*\*

1965-ին Հայաստան կը գտնուէի սփիւռքահայ ուսուցիչներուն հետ:

Կապի կոմիտեութիւնը ամէն ճիգ կը թափէր, որ ամբողջ երկիրը ճանչնայինք:

Այն օրը մեզ տարած էին Արագածոտնի կողմերը, ուր երկար մնացինք: Վերադարձին՝ աշիս տեսայ ցուցանակ մը, որուն վրայ կարդացի՝ Փարպի...

Ունեցայ ցնցում մը, որուն յաջորդեց ներքին արեւոտում մըն ալ:

Շատ արագ կողմաորոշուեցայ եւ մեզի ուղեկցող զբօսավարէն խնդրեցի, որ քանի մը վայրկեան այցելեմք այդ գիւղը, որ «վերջապէս Ղազար Փարպեցիինն է, ատով ալ կրկնակի նուիրական է, մէջ մըն ալ ո՞ր, ինչպէ՛ս առիթը պիտի ներկայանայ» եւ այլն:

Յաջողեցայ համոզել, եւ հանրաշարժը շեղեցաւ դէպի Փարպի, որ հեռու չէր: Եւ քիչ ետք կը գտնուէի ահա այն հողին վրայ, ուրկէ քառասունհինգ տարի առաջ հեռացած էր Գիւգալեան եւ որուն կարօտովը ապրած, երազած ու վաղաժամ մեռած էր պանդխտութեան մէջ:

Մեր առջեւ պարզուեցաւ հայկական տիպական գիւղ մը,- որուն նմանները տեսեր էիք անցնող օրերուն,- քանի մը հարիւր տուններով, իր պապիկներով ու տատիկներով, մագերը կոնքերուն շաղ տուած



ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑՉՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ 1952-ԻՆ

Նստած՝

Կեդրոնը՝ Սիմոն Վրացեան

Անոր աջին, գլխարկով, Կոստան Չարեան

Չարեանի աջին՝ երկրորդը՝ Գառնիկ Գիւգալեան

Վրացեանի ձախին՝ երրորդը՝ Կարօ Սասունի

Ծանօթ.- Նկատել, թէ ինչ խոր բժախնդրութեամբ Գիւգալեան եւ Սասունի

հակադրուած են իրարու. մէկը՝ Վրացեանի աջէն երրորդը, միւսը՝ ձախէն

երրորդը:

պարմանուհիներով ու թխադեմ պատանիներով, փողոցները վիստացող ժիր ու առողջ, կայտառ ու կուշտ երկսեռ մանուկներով:

Տարուած ու վերացած կը դիտէի շուրջս. սա անցնող տատիկին տարիքը պիտի ունենար ինք ալ,- կը մտածէի,- եթէ սիրտը քիչ մը արեւի առողջ ըլլար ու տոկար, թերեւս ճանչցած էր գայն, թերեւս...սիրած ալ էին գիրար, եւ ինչո՞ւ չէ:

Ուրեմն այս գիւղին մէջ ծներ էին Ղազար Փարպեցին եւ իրմէ 1500 տարի ետք...Գառնիկ Գիւգալեանը: Հաւանաբար այս փողոցներուն մէջ ալ վազվազած ու խաղացած էին անոնք իրենց անհոգ մանկութեան օրերուն: Թերեւս հենց սա՛ էր անոնցմէ մէկուն կամ միւսին պապեմական օջախը, թերեւս յաջորդը, երրորդը...Ի՞նչ գիտնամ: Ուրեմն ասոր կարօտովն է, որ մղկտացած ու հիւժած էր Գիւգալեան, այդ կարօտն ալ դառնացուցած էր զինք, եւ ես այդ կարօտին գոհերէն մէկն էի միայն, կարօտ մը, որ ամբողջ 35 տարի հալածած ու ի վերջոյ չարացուցած էր զինք:

Ու ափսոսանքով մտածեցի, որ եթէ քիչ մըն ալ ապրէր, կրնար գալ ու տեսնել այն հայրենիքը, որուն համար զէնք կրած էր օրին, ճիշդ ինչպէս իր գիւնակիցը՝ Կարօ Սասունին, մեզմէ քանի մը տարի ետք եկաւ ու տեսաւ գայն:

-Բաւարար՞ր է, գնա՞նք,-յանկարձ լսեցի առաջնորդին կիրթ ձայնը:

-Գնա՞նք,- կրկնեցի ու շարժեցաւք:

\*\*\*

Հիմա արեւի լաւ կ'ըմբռնէի զինք եւ կը զգայի, որ խաղաղած է հոգիս, տարիներու ծանր բեռը, որ կուտակած էր Գիւգալեան իր կծու վերաբերմամբ, զգալապէս թեթեւացած էր, եւ արեւի հաշտ ու սիրալիկ դարձած էր անոր մտապատկերը՝ գիտակցութեանս պատասխան վրայ, ուր ան կը վերայայտնուէր իբրեւ գլխաւոր գոհը ճակատագրի:



# ԽՃԱՆԿԱՐ

## ՄԵՐ ՆԱՅԻՐԵԱՆ ԱՂՋԻԿՆԵՐՈՎ ՊԻՏԻ ՅԱՂԹԵՆՔ



Մեան Ազարիկեան-Պարմաքսզեան

**«Գօր եղաւ հայ կինը մեր պատմութեան ընթացքում: Աշխարհը չգիտի, թէ ինչ երկար կամք, ինչ անընկճելի կորով, ինչ անձնուրաց արիւթիւն կայ թխադէմ, այդ հեզ ու բարի աչքերով, ամօթխած ու արդար էակի մէջ, որ կոչուում է հայ կին...»**

Աւետիս Ահարոնեան

Արցախեան պատերազմը թելակոխեց իր երրորդ շաբաթը: Հայ կնոջ դերակատարութիւնը ակնեղբու դարձաւ պատերազմի առաջին օրէն իսկ: Հարիւրաւոր կանայք կամաւորագրուեցան, որպէսզի անհրաժեշտութեան պարագային մասնակցին մարտերուն:

Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի քարտուղար ռազմական փորձագէտ Արծրուն Յովհաննիսեանը քանի մը օր առաջ յայտարարեց թէ՛ անդադար նամակներ կը ստանայ հայ աղջիկներէ, որոնք կ'ուզեն



զէնք վերցնել եւ պաշտպանել հայրենիքը: Ուստի Նարի Սիւնի եւ Նարե Խաղաթեան կազմեցին Արցախի կանանց ջոկատ: «Արդէն հարիւր կին արձանագրուած է, կան բազմաթիւ դիմումներ: Առիւծը առիւծ է՝ տղամարդ լինի, թէ կին: Նրանք, մեր դուստրերը, մեր քոյրերը մեր պատիւն են: Հենց իրենցով էլ պիտի յաղթենք», ակնարկեց էր Յովհաննիսեան:

Մեր կամաւոր հայուհիներէն Աղաւսին գրած է.

**«Պատերազմի ընթացքին կնոջ ներկայութիւնը կարելի է: Հայրենիքը միայն տղամարդունը չէ: Կանայք ալ կ'օգտուին հայրենիքի բարիքներէն, ուրեմն մենք ալ պետք է պաշտպանենք մեր հայրենի հողն ու ջուրը»:**

Կարինէն այսպէս արտայայտուեցաւ ռազմաճակատ մեկնելէն առաջ: «Իմ ոգին պարտուիլ չի գիտի: Ես նոյնպէս գրում եմ կամաւոր: Շուտով կը միանամ քաջ տղերքին: Ես անգամ լաւ շարժելու եմք: Մենք ենք տերը մեր երկրի»:

Իսկ Նարե Խաղաթեան յայտարարեց.

**«Ուժեղ տղամարդու կողքին միշտ էլ ուժեղ կին է կանգնած: Մեր երկրի համար օրհասական պահն է այժմ, ինչպէս եղել է բազմաթիւ անգամներ պատմութեան ընթացքում եւ ամէն անգամ մենք յաղթել ենք մեծապէս մեր միասնութեան շնորհիւ: Ուստի, մենք՝ հայուհիներս, չենք կարող անմասն մնալ հայի եւ Հայաստանի գոյութեան համար մղուող այս պայքարից եւս:**

Մեր նախաձեռնող խմբի անունից դիմում ենք կառավարութեանը խնդրանքով՝ ընդգրկել մեր հայրենիքի պաշտպանութեան շարքերում:


Միեւնոյն ժամանակ կոչով դիմում ենք աշխարհի բոլոր ծայրերում բնակող հայուհիներին.

ՄԻԱՅԷՔ ՄԵՁ.....

Այսօր մենք տասը հոգի ենք, վաղը կարող ենք դառնալ 100, 1000 բանակ»:

Պատմութեան ընթացքին հայ կինը իր ամուսնոյն կողքին կռուած է իր երկրի եւ ժողովուրդի անկախութեան համար: Այնքան ատեն որ ունինք այսպիսի կանայք, մեր նայիրեան աղջիկներով ա՛լ պիտի յաղթենք:

## ՈՂՄԱԿՆԵՐՈՒՄ ՑՆՈՐԱՄԻՏ...



Հրանդ Մարգարեան

Ո՞ր մոլորակի վրայ կ'ապրիք դուք, Դուք, տկարամիտ, ցնդա՛ծ յիմարներ: Գագանը անգամ երբ կը ձախողի իր որսը բռնել Խելքի կու գայ որ ճամբան իր փոխէ՛ Գունէ փրկելու իր ունեցածը...

Տկարամի՛տ եք: Ձեր Խեղճ գիւտորին դուք այդքան կատե՛ք, Որ գինք կը դրկեք ռազմի դաշտին մէջ Ձեր ցնորամիտ ցանկութիւններուն համար գոհուելու: Զտորվեցա՛ք դեռ...

Դուք ճակատ կ'ելլեք պատմութիւն կերտած ազնուութեան հետ... Դուք ճակատ կ'ելլեք գոյութիւն բառը կերտող ազգի դէմ,

Քնացա՛ծ էք դուք, թէ՛ կոյր իսկապէս... Զտեսա՛ք ազգը, այս ազգը խրոխտ՝

Մահը հեզուելով իր կեանքը կերտեց: Եթէ չէք գիտեր,

Գացեք պատմութեան գիրքեր կարդացեք... Մենք ՄԱՍԻՍՈՒԱԾ ենք...

Մեր արմատները խրած ենք մինչեւ կիզակէտն երկրին... Մենք՝ ԱՐԱԳԱԾՈՒԱԾ Աստուծոյ հետ խօսող շունչ ենք երկնասլաց:

Մենք՝ ՍԻՓԱՆՈՒԱԾ ենք՝ ուր երկինք երկիր իրար են գրկած: Մենք՝ ՄՈՒՎՈՒԱԾ ենք շղթաներով կուռ Արցախն ենք գրկած:

Մենք՝ ԱՐԱՅՈՒԱԾ ենք պատիւը որպէս օրհնութիւն ընտրած: Մենք՝ կարմիր ՀՈ՛Ղ ենք

ուր մեր նախնիներն արնոտ աչքերով մեզ պատգամեցին արեւի յոյսով թե՛ ճապագայի արեւը պայծառ:

Մենք՝ ՊԱՏՄԱԿԵՐՏ ենք արիւնով օծուած. Անցեալէն եկած մենք ՅԱՒԵՐԺԻՆ ՀԵՏ վաղուց ենք ճախրած:

Ցնորա՛ծ էք դուք, որ կ'ուզեք ջնջել «Աստուծոյ հետ խօսող» ազգն այս փառապանծ: Մութ անտառներէն եկեր էք այսօր ԱՐԵ՛՛՛՛՛ մարելու:

Ուշքի՛ եկեք դուք... Պատմութեան ցնորած դուք ուղեւորներ:

ԶԷ՛ք գիտեր միթէ. Երբ թափառական խոտ կը կրծէք Մշակոյթ կ'երգեր ՀԱՅը իր գաւկիսի...

Թէ խելապատիկ ցանկութիւններն ձեր Ռազմի երգերով ձեզ պիտ' օրօրեն, Գիտցե՛ք, արթնցե՛ք,

Դաւիթը կու գայ իր Թուր Կեծակով Եւ իր հետ պիտի բարձր շեփորեն ՄԱՍԻՍԵՆ ՄԻՆՉԵՒ ՄՈՒՎ ՈՒ ՍԻՓԱՆ,

ԱՐԱԳԱԾ, ՍԵՒԱՆ, Եւ դեռ Աշխարհի քարտէզն ոռոգող Մեր պատմութեան կուռ կառչած հայեր...

Եւ միահամուռ կայծակներ դարձած՝ Նոր դարպասներու դռները բացած Ձեզ մութ պատմութեան գիրկը կը նետեն...







Ռաֆֆի Սիկահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

-Լաթաքիոյ Յըթին խումբի խաղացող Մարտիկ Մարտիկեան մէկ տարուան պայմանագիրով այս տարի անգամ մը եւս մաս պիտի կազմէ խումբին: Վերջին շրջանին Մարտիկ ստացաւ զանազան առաջարկներ, սակայն աւարտին ան որոշեց Լաթաքիա մնալ:

-Սուրիոյ հաւաքականի մարզիչ Նապիլ Մաալուլ կայքի մը հետ զրոյցի պահուն ներկայացուց իր դժգոհանքը, ինչպէս նաեւ յայտնեց, թէ 7 ամիսէ ի վեր ինք եւ իր օգնականները չեն ստացած իրենց նիւթական իրաւունքները: Աւելցնենք, որ Մաալուլ մեկնեցաւ Թունուզ վերադառնալու յոյսով:

-Անցեալ շաբթուան ընթացքին Սուրիոյ Պասքէթի Դաշնութիւնը յայտարարեց Ռուսիոյ մէջ կայանալիք ուսումնամարզական հաւաքին մաս կազմող խաղացողներուն անունները, որոնց մէջ է Ճալաա-ի Նախկին խաղացող Ճորճ Նագարեան, որ յառաջիկայ տարեշրջանին մաս պիտի կազմէ Զոմսի Զարամէին:



-Սուրիոյ Ֆութպոլի անդամական ընդհանուր ժողովը որոշեց 2022-2023 տարեշրջանին Ա. դասակարգի ախոյեանութեան թիւը նուազեցնել 12-ի, փոխան 14-ի: Նիստին հրապարակուեցաւ յառաջիկայ տարեշրջանի նշանակը:

-Համայնի մէջ կայացած Սուրիոյ ֆութպոլի Սուփըր գաւաթի մրցումին Դամասկոսի Ռահտէն 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Սուրիոյ ախոյեան Թըշրինը եւ տիրացաւ բաժակին:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՔՐԻՍԿԻԱՆՕ ՌՈՆԱԼՏՕ ՊՍԱԿԱՁԵՐ ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒՄԾ Է

Փորթուկալի հաւաքականի խմբապետ Քրիստիանօ Ռոնալտօն յառաջիկայ շրջանին մաս պիտի չկազմէ յառաջիկայ մրցումներուն՝ պսակածել ժահրով վարակուած ըլլալուն համար:



Այս մասին պաշտօնապէս յայտարարեց Փորթուկալի ֆութպոլի Դաշնութեան պաշտօնական էջը: Ֆութպոլիստը իր վերջին PCR-ի քննութիւնը կատարած է ՌԻԵՖԱ-ի Ազգերու լիկայի 3-րդ փուլի Ֆրանսա-Փորթուկալ խաղէն ետք, որուն արդիւնքը դրական էր: Ըստ բժշկական քննութիւններուն, Ռոնալտօյին վիճակը մտահոգիչ չէ: Աւելցնենք, որ Փորթուկալի հաւաքականի մնացեալ խաղացողներուն քննութեան պատասխանը բացասական է: Հաւաքականը կը պատրաստուի իր յաջորդ մրցումին:

### ՎԱՆ ՏԱՅՔ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱՐ ԾՈՒՆԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ

Անգլիոյ Լիվըրփուլ խումբի խաղացող Ֆիրկէ Վան Տայք Շաբաթ օրուան մրցումին ծանրապէս վնասուեցաւ, որուն հետեւանքով ենթարկուեցաւ ծունկի գործողութեան: Հանդիպումը սկսելէ քանի մը վայրկեան ետք, Վան

Տայք վիրաւոր դուրս եկաւ դաշտէն եւ ուղղուեցաւ հիւանդանոց: Ըստ բժիշկներուն, ան կրնայ որոշ շրջան մը հեռու մնալ դաշտերէն, առանց ճշդելու բացակայութեան ժամանակաշրջանը: Աւելցնենք, որ Վան Տայք կը նկատուի Եւրոպայի լաւագոյն պաշտպանողական դիրքի խաղացողներէն մէկը, եւ անոր բացակայութիւնը իր ժխտական ազդեցութիւնը պիտի ունենայ Լիվըրփուլին վրայ:



### ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏԵՆ ՈՒ ՊԱՐՍԵԼՆԱՆ ԱՆԱԿՆԿԱԼ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ


Սպանիոյ ախոյեանութեան 6-րդ փուլի մրցումներուն, մայրաքաղաքի թագաւորական ակումբ ՌԵԱԼ Մատրիտը 1-0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Բատիշ խումբին: Հանդիպումին միակ կողմը նշանակուեցաւ



16-րդ վայրկեանին: Նոյն արդիւնքով պարտութեան մատնուեցաւ նաեւ քաթալոնիական Պարսելոնան, որ գիշեցաւ Խիթաւիին: Յաղթական ակումբը իր կողմը նշանակեց տուգանային հարուածով:

Թիւ 28

Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է  $\text{N}h6\#$

ՀՍԸՄ-ի ձատրակի Յնձիւ.

Երկուշաբթի 26/10	Երեքշաբթի 27/10	Չորեքշաբթի 28/10	Հինգշաբթի 29/10	Որբաթ 30/10	Շաբաթ 31/10	Կիրակի 1/11
17° 31°	16° 31°	15° 30°	15° 30°	15° 28°	15° 28°	15° 28°





## ՉՕՐԱԿՅԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ...

Մկիգր` Էջ 1

Արաբերեն բացման խօսք արտասանեց Սարգս Դազարեան, իսկ հայերեն՝ Ռաբել Շահինեան: Անոնք իրենց խօսքերուն մէջ յատկապէս յայտնեցին, որ «27 Սեպտեմբերին Ատրպէյճան սանձազերծեց Նոր պատերազմ Արցախի դէմ, սակայն հայկական բանակը կու տայ արժանի պատասխանը, ետ մղելով թշնամին եւ առանձին կը պայքարի հարաւային կովկասի մէջ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի տեղադրած ահաբեկչական խմբաւորումներուն դէմ: Հայութիւնը ամբողջ Սփիւռքի մէջ պետք է միասնական ուժերով պայքարի ցեղասպան թուրքին ծրագրած երկրորդ ցեղասպանութեան դէմ, որովհետեւ այս անգամ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ Նպատակն է գրաւել Արցախը, հասնիլ Հայաստանի սահման եւ վերացնել հայ ժողովուրդը, իրականացնելու տարիներու իրենց փակթուրանական երազը: Թուրքիան, ինչպէս Սուրիոյ մէջ պատերազմ իրահրելով, տարածքներ գրաւելով, ժողովուրդը գաղթի ու տեղահանութեան մղելով միջազգային օրէնքներ խախտեց եւ աներ ու ատելութիւն տարածեց ամէն կողմ, Նոյն ոճով ուղղուած է այսօր Արցախ: Սակայն հայոց բանակը վճռած է կենաց մահու կոխ մղել եւ պաշտպանել իր հայրենիքն ու ժողովուրդը:

Աշխարհասփիւռ հայութիւնը Արցախի ու Հայաստանի կողքին է, ուստի զօրակցիքը Արցախին ու հայոց բանակին, մեր բոլոր կարելիութիւնները ի սպաս դնելով արցախահայութեան, ողջ հայութեան պայքարին եւ որպէս երիտասարդներ քարոզչական մեր բոլոր միջոցներով պարզելու աշխարհին եւ մեր միջավայրին Թուրքիոյ ցեղասպան Եւթիւնն ու պատերազմական յանցագործութիւնները: Մենք երիտասարդներս, պետք է արթուն պահակները ըլլանք հայ դատին ու մեր ժողովուրդի իրաւունքներուն: Պարտաւոր ենք ըլլալ, որովհետեւ այլ ընտրուանք չունինք: Յաղթելու ենք, որովհետեւ միասնական ենք եւ պարտաւոր ենք պայքարիլ մեր պապերուն կերտած հայրենիքին ու անոր սուրբ հողին համար:

Յարգանք Արցախի մէջ նահատակուած մեր հերոսներուն յիշատակին: Յարգանք ճակատ մեկնած ու հայրենիքի պաշտպանութեան նուիրուած բոլոր հայ հերոսներուն, ՀՀ-ի կամաւորական վաշտին: Անոնք ուխտած են ամէն բանէ վեր դասել հայրենիքը եւ այդ ուխտին հաւատարիմ մնալով կը ծառայեն այսօր պատերազմի դաշտին վրայ»:

Ապա արաբերեն ազգային երգերով ելոյթ ունեցան Մարինե Մարգարեանն ու Լիւսի Յովհաննեսեանը, որմէ ետք բեմ իրաւիւրուեցաւ հանրածանօթ երգիչ Յակոբ Մկրտիչեան, որ փունջ մը Յեղափոխական երգերով թնդացուց ճեմարանի շրջափակը:

Համերգի ընթացքին սեմական երիտասարդներ, փոքրիկներ, ծերունիներ իրենց ձեռքին ունենալով եռագոյն դրօշը, բեմ բարձրացան եւ գայն ծածանելով հոծ բազմութեան հետ միասնաբար երգեցին «Մենք Անկեղծ Չիւնուր ենք» եւ «Կամաւորին» երգերը, յիշեցնելով Թուրքիոյ եւ Ատրպէյճանին, որ հայը կ'ապրի իր ազգային շունչով, կը խօսի հայերէն, միշտ յաղթած է եւ երբեք ծունկի չի գար: Բոլորս միասնական ուժով պիտի յաղթենք:

Ինչպէս ըսած է սպարապետ Գ. Նժդեհ. «Եթէ ազգը բանակ կը դառնայ, կարելի չ'է զինք ծունկի բերել»:

Յատկանշական էր երգիչ Յակոբ Մկրտիչեանին տպաւորութիւնը: Ան պատերազմի տարիներուն իր ծննդավայր Հալեպէն մեկնած ըլլալով կը նախատեսէր ամայացած տեսնել Հալեպը, սակայն հոծ բազմութիւնն ու ներկաներուն ոգեւորութիւնը յուզումնախառն ապրումներով համակեցին անոր սիրտը: Համերգին մասնակից երիտասարդները մաղթեցին, որ Արցախը թուրք-ատրպէյճանական ահաբեկչական պատերազմէն յաղթական դուրս գայ ու անելի ուժեղ դառնայ համայն հայութեան զօրակցութեամբ:

Համերգը վերջ գտաւ Արցախի Հանրապետութեան քայլերով: